ԻՍԼԱՄԱԿԱՆ ՌԱՄԱՆՏԻՑԻԶՄ

الرومانسية في الإسلام باللغة الأرمينية

Հեղինակ

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيحة

Թարգմանությունը

المركز الأوروبي للدراسات الإسلامية

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով Աբու Առամ

WWW.ISLAMLAND.COM

ISLAM LAND ...
GROW GOODNESS
BY YOUR HAND

EXPLORE ISLAM IN 130 LANGUAGES

ISLAMLAND

ISLAMLAND.COM

ISLAMLANDWEB

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ
ՄՈՒՍՈՒԼՄԱՆ – ՌՈՄԱՆՏԻԿԸ
ՍԱ ԻՍԼԱՄՆ Է.
ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ ՈՐԴՈՒՆ, ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐԸ.
ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՄՈՐ ՈՒՂԵՐՁԸ ԴՍՏԵՐԸ,ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԳԻՇԵՐԸ.
ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՅԻ Խ.Ա.Ո.Ն ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ
ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ Խ.Ա.Ո.Ն և ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՆԳԻՍՏԸ.
ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՅԻ Խ.Ա.Ո.Ն ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՂՄԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ Խ.Ա.Ո.Ն և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ամենագթասիրտ և Ամենաներող Ալլահի անունով.

Փառք Ալլահին, Աշխարհների Տիրակալին: Խաղաղություն և օրհնություն Մուհամեդին, նրա ընտանիքին և նրա բոլոր ուղեկցորդներին:

Այս գրքում, խոսքը գնում է իսլամական ռոմանտիցիզմի մասին: Անհրաժեշտ է, որ Մարգարե Մուհամեդը (Խ.Ա.Ո.Ն) լինի օրինակ այս հարցում: Քանի, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), ում ուղարկել էին ամբողջ մարդկությանը, եկել էր սովորեցնելու Ալլահի օրենքները և բարելավելու բարոյականությունը: Նա (Խ.Ա.Ո.Ն) օրինակ է մուսուլմաններին, ում անհրաժեշտ է հետևել: Պետք է ուղղորդվել նրա Սուննայով, իրականացնելով Ամենաբարձրյալ Ալլահի պատվիրանները, Ով ասել է .

«**Ալլահի Մարգարեն, հոյակապ օրինակ է ձեզ համար, նրանց համար, ովքեր հույսները դրել են Ալլահի և Վերջին Օրվա և Ալլահի հիշատակման վրա**:» (Ղուրան 33:21)

Նա (Խ.Ա.Ո.Ն) Ամենաբարձրյալ Ալլահի հաղորդողն է, այդ իսկ պատճառով մուսուլմաններին հայտնի է Նրա ամբողջ կյանքը մանրամասնորեն, մեծ և փոքր, անձնական և հասարակական հարցերը, որոնք փոխանցվել են սերնդից սերունդ: Նրա (Խ.Ա.Ո.Ն) խոսքը և արարքները հանդիսանում են օրենսդրություն, որի միջոցով մուսուլմանը գիտակցում է իր կրոնը, որը տանում Ալլահի Գոհունակությանը, Սիրուն և Դրախտ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

««**Ասա. « Եթե դուք սիրում եք Ալլահին, ապա հետևեք ինձ և Ալլահը կսիրի ձեզ և կների ձեր մեղքերը, քանի որ Ալլահը Ներող և Գթասիրտ է:**»» (Ղուրան 3: 31)

Ճշմարիտ, Իսլամի հիմքը սերն է, որը դրդում է ենթարկվել քո Սիրելիին: Այն դրդում է հետևել Նրա պատվիրաններին և արգելել Նրա արգելքները: Դրդում է նաև հնարավորին չափ մոտենալ Նրան, կատարելով Նրան սիրելի արարքներ: Իրոք, ամենամեծ և առաքինի սերը Ամենաբարձրյալ Ալլահին տածած սերն է, որի միջոցով իրականանում է մուսուլմանի բարձր բարոյականությունը: Դրա շնորհիվ նա դուրս է գալիս իր եսի սահմաններից և բարձրանում է, իրականացնելով կրոնի օրենքները: Նա վատնում է իր գութը և սերը Ալլահի արարածներին անշահախնդրորեն, դուրս գալով եսասիրական սիրուց, որը հիմնված է անձնական շահի և օգուտի վրա:

Դրան հաջորդում է Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) նկատմամբ սերը, որը վեր է սեփական հոգու, ունեցվածքի և երեխաների նկատմամբ սիրուց:Նա (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանում է ճիշտ ուղղու, Ալլահի կրոնի և Դրախտի մուտքի պատճառ:Այդ իսկ պատճառով այն հանդիսանում է բարձրագույն աստիճան: Դրա հետ մեկտեղ պետք է պատշաճ հարգանք տալ այն աստիճանին, որի վրա դրել է նրանց Ալլահը: Այդ աստիճանը երկրպագությունն է, երկրպագություն և հնազանդություն Միակ Ալլահին: Ամենաբարձրյալը ասաց.

««Ասա. «**Եթե ձեր հայրերը, ձեր զավակները, ձեր եղբայրները, ձեր կանայք, ձեր ընտանիքները, ձեռք բերված ունեցվածքը, առևտուրը, վնասը, որից դուք խուսափում եք և կացարանը, որը դուք սիրում եք ավելի սիրելի են, քան Ալլահը, Նրա Մարգարեն և Նրա ճանապարհին պայքարը, ապա սպասեք, մինչ Ալլահը գա իր հրամանով: Ալլահը չի ուղղորդում կեղծ մարդկանց ճշմարիտ ուղղու:**»» (Ղուրան 9: 24)

Նա, ով համոզված է, որ Իսլամը դաժանության և կոպտության կրոն է, հեռու է իսկությունից: Իսլամը ընդգրկուն կրոն է: Այսինքն, Իսլամում աչքաթող չի արվում մուսուլմանի կյանքի ոչ փոքր, ոչ էլ մեծ խնդիրները: Լինի դա նյութական, թե հոգևոր խնդիր, Իսլամը տալիս է ճիշտ պատասխան և դնում է ճիշտ ուղղու: Այդ իսկ պատճառով, Իսլամը ոչ միայն հավատքի, օրենքների, բարոյականության կրոն է, այլև ռոմանտիցիզմի կրոն է, որը ներառում է ճիշտ, համընդհանուր իսլամական հասկացություն, արտահայտված սիրո, գութի, զգացմունքների քնքշությամբ, կարեկցանքով, բարերարությամբ, բարձր բարոյականությամբ և արարածների հետ հարաբերությունների քնքշությամբ, որը շրջապատում է մարդուն իր կյանքում: Այս քնքշությունը չի սահմանափակվում միայն մեկ կողմով, որը արտահայտվում է կնոջ և տղամարդու միջև թե ֆիզիկական, թե հոգևոր առումով, քանի որ իսլամում ռոմանտիցիզմը չի նշանակում բարի վերաբերմունք նրան, ով սիրում է վատ վերաբերվել մյուսներին: Եվ այդ պատճառով մենք կցուցադրենք մուսուլման ռոմանտիկի բարոյականության հատկանիշները, որպեսզի պարզաբանենք սիրո և ռոմանտիզմի իսլամական հասկացությունը նրանց նկատմամբ, ովքեր շրջապատում են մուսուլմանին:

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ – ՌՈՄԱՆՏԻԿԸ

- Մուսուլման - ռոմանտիկը նա է, ում համար անձեռնամխելի են մարդիկ, նրանց կյանքը, պատիվը և ունեցվածքը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Հաղորդե՞մ ձեզ հավատացյալի մասին: Այդ նա է, ում չարիքից ապահովված են մարդիկ իրենց կյանքերով և ունեցվածքով: Եվ մուսուլման է հանդիսանում նա, ում լեզվից և ձեռքերից ապահով են մարդիկ:» [1]

- Եվ ոչ միայն այդ: Մուսուլման ռոմանտիկը նա է, ով սիրում է բարիք և տալիս է այն մարդկանց անշահախնդրորեն: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ալլահի արգելքներից վախենալով, դու կդառնաս մարդկանցից ամենա երկրպագողը: Գոհացիր նրանով, ինչ Ալլահը կանխորոշել է քեզ և դու կլինես մարդկանցից ամենահարուստը: Բարերար եղիր հարևանիդ և կլինես ամենահավատացյալը: Ցանկացիր մարդկանց այն, ինչ ցանկանում ես քեզ համար և դու կլինես մուսուլման:» [2]

- Մուսուլման ռոմանտիկը արդար է իր և հասարակության նկատմամբ: Արդար է նույնիսկ իր թշնամիների նկատմամբ: Նա չի պատժում որևէ մեկին ուրիշի հանցագործության համար: Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մուսուլմանների բանակ ուղարկեց այն բազմաստվածների դեմ արշավի, ովքեր վնասում էին, արտաքսում և տանջում էին նրա հետևորդներին, ասաց.

---

[1] Մուսնադ Աբդուլլահ իբն Մուբարակա

[2] Ահմեդը, ատ- Տիրմիզին, ալ- Ալբանին հաղորդել են, որ հադիթը «լավն է»

«Մի սպանեք երեխաների, կանանց և ծերերի, մի չորացրեք աղբյուրներ, մի արմատախիլ արեք ծառեր, բացի նրանցից, որոնք խանգարում են մարտնչել կամ ծածկում են ձեր ուղղին, մի այլանդակեք մարդուն և անասուններին, մի փոխանցեք և մի գողացեք ավարից [3]:»

- Մուսուլման ռոմանտիկը հոգ է տանում շրջակա միջավայրի, կենդանիներ մասին: Նա չի սիրում, երբ նրանց տանջում են:

Մեկ անգամ, Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտով մի մարդ անցավ ավանակի հետ, որի ճակատին կար դաջվածք: Այդ տեսնելով Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Հաղորդեմ ձեզ արդյոք այն, որ ես անիծել եմ նրան, ով դաջում է անասունին կամ հարվածում է երեսին:»[4]

Պետք է անասունին վերաբերվել մեղմությամբ և գթասրտությամբ: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մաքրում էր ափսեն կատվի համար, որից հետո այն ըմպում էր դրանից: [5]

Նա (Խ.Ա.Ո.Ն) նույն կերպ հոգ էր տանում շրջապատող թռչուններին, չէր վախեցնում նրանց և առանց անհրաժեշտության չէր որսում: Իբն Մասուդը (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մեկ անգամ մենք ճանապարհ էինք գնում Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ և նա հեռացավ կարիքը հոգալու: Այդտեղ մենք տեսանք մի փոքրիկ թռչուն, երկու ձու կողքին: Մենք

---

[3] Ալ-Բայհակի
[4] Աբու Դաուդ, Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:
[5] Ատ- Տաբարանի

վերցրեցինք այդ ձվերը, և թռչունը սկսեց ուժգին թափահարել թևերը: Եկավ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) և ասաց.

«Ո՞ վ է տառապանք տվել նրան, վերցնելով երեխաներին: Վերադարձրեք նրա երեխաներին:»

Նա (Խ.Ա.Ո.Ն) նույնպես տեսավ մրջնաբույն, որը մենք այրեցինք և ասաց.

«Ո՞ վ է այդ այրել:» Մենք պատասխանեցինք .«Մենք:» Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .«Ոչ ոք իրավունք չունի պատժել կրակով, բացի Տիրոջ կրակից:»[6]

- Մուսուլման – ռոմանտիկը հոգ է տանում այն վայրերի մաքրության մասին, որտեղ մարդիկ են հավաքվում: Նա (Խ.Ա.Ո.Ն) կարիք չէր հոգում, ոչ էլ աղբ էր թափում այնտեղ, ոչ էր թույլ էր տալիս մյուսներին անել այդ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Զգուշացեք երկու պատճառներից, որոնց շնորհիվ ձեզ կարող են անիծել, դրանք են ճանապարհի վրա կամ ստվերում մեծ և փոքր կարիք հոգալը, որտեղ կարող են մարդիկ նստել:» [7]

Հակառակը, մուսուլման ռոմանտիկը նա է, ով փորձում է մաքրել այն, ինչ կարող է վնաս պատճառել: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ճանապարհից խոչընդոտ հեռացնելը բարեգործություն է:» [8]

---

[6]Աբու Դաուդ, Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:
[7]Աբու Դաուդ Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:
[8] Աբու Դաուդ.

- Մուսուլման -ռոմանտիկը պահպանում է այն, ինչ օգուտ է բերում հասարակությանը և մարդկանց: Օրինակ ծառերը և այլն: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մի կոտրիր պտղաբեր ծառը, մի սպանիր տնային անասուն առանց կարիքի և զգուշացիր հավատացյալին վնաս պատճառելուց:»[9]

Մուսուլման –ռոմանտիկը նա է, ով կոչ է անում բնության պահպանությանը գիտակցականորեն: Նա ծառեր է տնկում և կանաչազարդում է շրջակայքը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Եթե հասնի Դատաստանի Օրը, և ձեզանից որևէ մեկի ձեռքին լինի արմավենու ճյուղ, ապա եթե հնարավոր է տնկիր այն, մինչ Ժամը կգա:»[10]

Մուսուլման –ռոմանտիկը հոգ է տանում մաքուր ջրի մասին և չի աղտոտում այն: Ջաբիրը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արգելեց միզել հոսող ջրի մեջ:» [11]

«Մուսուլմանը համագործակցում է երեք բաներում. արոտավայրերում, ջրում և կրակում:»[12]

Նա ջանում է պահպանել ջրի աղբյուրը, առվակները, որպեսզի ամբողջ մարդկությունը, կենդանական և բուսական աշխարհը կարողանա օգտվել դրանից: Բայց, միևնույն ժամանակ, չի կարելի աննպատակ գերօգտագործել այն:Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անցնելով Սադի կողքով, երբ նա լվացում էր անում, ասաց.

---

[9] Աբու Դաուդ
[10] Ալ- Բուխարի, Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:
[11] Մուսլիմ
[12]Աբու Դաուդ

«Այս ի՞նչ ճոխություն է:» Նա պատասխանեց . « Մի՞թե լվացման մեջ գոյություն ունի ճոխություն: » Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Իհարկե, նույնիսկ եթե դու այդ անում ես հոսող գետի մոտ:»[13]

Մեզ հրամայված է հետևել Ալլահի Մարգարեյին(Խ.Ա.Ո.Ն) և նրան, ինչ ներառում է իրական «ռոմանտիզմի» նշանակությունը, որը ներառում է մեղմություն ամենի հետ փոխհարաբերություններում: Հետևել այդ ամենին դարձել է մուսուլմանի հավատքի հաստատում, ինչին նա հավատում է և պահպանում է դրանց օգտագործումը իրականության մեջ: Նա իր կյանքում վարվում է այնպես, ինչպես գոհանում է Ալլահը, Ով ասաց.

««**Ասա. « Եթե դուք սիրում եք Ալլահին, ապա հետևեք ինձ և Ալլահը կսիրի ձեզ և կների ձեր մեղքերը, քանի որ Ալլահը Ներող և Գթասիրտ է**:»» (Ղուրան 3: 31)

ՍԱ Է ԻՍԼԱՄ

Իսլամը սեր է այն ամենին, ինչ արարել է Ալլահը: Այն իրականանում է Ալլահի հրամանների միջոցով:Մարդը ինչպես սնունդով և խմիչքով պահպանում է իր մարմինը, այնպես էլ կրոնով պահպանում է իր հոգին, որի միջոցով նա բարձրանում է արժանավայել կյանքի և հեռանում է կենդանականից և կրքայինից ինչպես նաև դաստիարակում է իր մեջ զգացմունքները: Այս բաժնում, մենք կդիտենք ռոմանտիցիզմի մեկ կողմը, որը վերաբերվում է Ալլահի Մարգարեյի, Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) հարաբերություններին իր կանանց հետ: Նա Խ.Ա.Ո.Ն բոլորին ցուցաբերում էր

[13] Իբն Մաջա, Ալ- Ալբանին ասաց, որ հադիթը «լավն է:»

լավագույն վերաբեմունք, մասնավորապես կանանց նկատմամբ: Նա բարձրացրեց նրանց աստիճանը, պարտավորեցնելով մյուսներին հարգել և հեռացրեց անարդարությունները նրանց նկատմամբ:

Մինչ իսլամը, կանայք ապրում էին կյանքի եզրագծում: Այսպես էր նկարագրում այդ Ումար իբն ալ- Խատաբը (Խ.Ա.Ո.Ն), հավատացյալների առաջնորդը և Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) երկրորդ փոխանորդը, ասելով .

«Երդվում եմ Ալլահով, տգիտության ժամանակաշրջանում,մենք կնոջը ոչ մի իմաստ չէինք տալիս, այնքան ժամանակ, մինչ Ալլահը չլուսաբանեց նրանց նկատմամբ վերաբերմունքում այն, ինչ լուսաբանեց և տարանջատեց նրանց համար այն, ինչ տարանջատեց:»[14]

Երբ եկավ Իսլամը, ապա նրա ուղղությունը կանանց նկատմամբ պարզ էր: Իսլամը լուսաբանեց, որ տղամարդու լավագույն բարերարություններից և բարոյականության բարձր արտահայտման ձևերից մեկը, կնոջը արժանավայել վերաբերվելն է: Եվ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ձեզանից լավագույնները, իրենց ընտանիքներին լավագույնը վերաբերվողներն են:» [15]

Այսպիսով, նրա ջանքերի շնորհիվ, կանայք հասան այնպիսի բարձր աստիճանի, որին չէին հասել տղամարդիկ և որից հեռու էին մյուս հասարակությունների կանայք: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սիրում էր կանանց մարդկային հատկությունները ասելով.

---

[14] Ալ- Բուխարի

[15] Ալ- Հակիմ, Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:

«Այս կյանքում ինձ սիրելի են կանայք և անուշաբույրը: Իսկ իմ աչքերի բերկրանքը աղոթքն է:»[16]

Այդ սերը ընդգրկում է զգացմունք և քնքշանք: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ես կտակում եմ ձեզ լավ վերաբերվել կանանց:»[17]

Այն կոչում է պահպանել նրանց իրավունքները, հրամայել քնքշություն նրանց նկատմամբ, հարգել և չնվաստացնել: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Կանանց պատկառանք է տալիս պատվելին և նվաստացում նվաստը:»[18]

Այն կոչում է նաև մեղմության և հարգանքի: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Իրոք, լիակատար հավատքով հավատացյալները նրանք են, ովքեր լավագույնն են վերաբերվում իրենց կանանց:»[19]

Այսպիսով, Իսլամը կնոջը դրեց այն աստիճանին, որից նա զրկված էր մինչ այդ: Այն հավասարեցրեց նրան տղամարդուն ամենում, բացի բացառիկ պարագաներից, որոնց մասին հրամայել է Ալլահը: Դրանցից են ժառանգությունը և այլն, որոնք նշում են շարիաթի վկայությունները: Այն դրաձրել է նրանց տղամարդու լրացում: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Կանայք հանդիսանում են տղամարդկանց քույրերը:»[20]

---

[16] Ալ- Բայհակի
[17] Մուսլիմ
[18] Աս- Սյուտի
[19] Ալ- Բուխարի

Ավելին, Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անվանեց կանանց «այս կյանքի լավագույն նվերը» ասելով.

«Այս կյանքը հաճույք է: Իսկ այս կյանքի լավագույն հաճույքը, առաքինի կինն է:»[21]

Նա կնոջը դարձրեց այս կյանքի երջանկության բանալին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Երջանկություն են համարվում չորս բան . առաքինի կինը, լայնարձակ կացարանը, առաքինի հարևանը և առողջ ձին:»[22]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անվանեց կնոջը «կրոնի կեսը:» Նկատի է առնվում, որ առաքինի կինը հանդիսանում է ճիշտ ուղղություն ամուսնու համար: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Երբ ստրուկը ամուսնանում է, ապա նրա կրոնի կեսը դառնում է լիարժեք: Թող նա վախենա Ալլահից, իր երկրորդ կեսում:»[23]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ինչպես սիրում էր կնոջ մեջ տեսնել կին, այնպես էլ սիրում էր տեսնել նրա մեջ մայր: Նա պարտավորեցնում էր հարգել, պատվել և հոգ տանել նրան, այդ դարձնելով Դրախտ մտնելու մեկ պատճառ: Մեկ անգամ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ եկավ Ջահիմա աս- Սուլյամին և ասաց. «Օ, Ալլահի Մարգարե, ես ցանկանում եմ մասնակցել մարտին և եկել եմ խորհրդակցել քեզ հետ:» Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .«Կենդանի՞ է արդյոք քո մայրը:» Ջահիման

---

[20] Աբու Դաուդ
[21] Մուսլիմ
[22] Ալ Մունզիրի
[23] Ալ-Բայհակի

պատասխանեց .«Այո:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Հոգ տար նրան, քանզի, իրոք, Դրախտը նրա ոտքերի մոտ է:»[24]

Նա (Խ.Ա.Ո.Ն) բարերարությունը նրա նկատմամբ դարձրեց ավելի գերադասելի, քան հոր և բարեկամների նկատմամբ: Մեկ անգամ Ալլահի Մարգարեյի մոտ եկավ մի մարդ և ասաց.

«Օ, Ալլահի Մարգարե, մարդկանցից ավելի ո՞վ է արժանի իմ լավ վերաբերմունքին:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .«Քո մայրը:» Մարդը հարցրեց . «Հետո, ո՞վ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .« Քո մայրը:» Մարդը հարցրեց .« Հետո ո՞վ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .« Քո մայրը:» Մարդը հարցրեց .« Հետո ո՞վ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .« Հետո քո հայրը:»[25]

Նույնպես, Մարգարեն Խ.Ա.Ո.Ն սիրում էր կնոջ մեջ կինը, և ասաց Ամար իբն ալ- Ասույին, երբ նա հարցրեց .

«Ո՞վ է մարդկանցից ավելի սիրելի քեզ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց . «Աիշան:» Ես հարցրեցի . « Իսկ տղամարդկանցի՞ց:» Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .«Նրա հայրը:» Ես հարցրեցի .« Հետո ո՞վ:» Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց . « Ումարը:» Հետո թվարկեց ուղեկցորդներին, իսկ ես լռեցի վախենալով . որ կլինեմ նրանց միջից վերջինը [26]:

Նույնպես Նա (Խ.Ա.Ո.Ն) կնոջ մեջ սիրում էր դուստրը: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

---

[24] Ան-Նասաի
[25] Ալ- Բուխարի
[26] Ալ- Բուխարի

«Ես չեմ տեսել մեկ ուրիշին ավելի ամոթխած, հնազանդ Ալլահին, և բարձր բարոյական, քան Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) էր իր դստեր, Ֆաթիմայի նկատմամբ:» Հետո Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Երբ Ֆաթիման գալիս էր Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ, նա ոտքի էր կանգնում նրա առջև, համբուրում և նստեցնում էր իր տեղը: Իսկ երբ Նա (Խ.Ա.Ո.Ն) էր այցելում Ֆաթիմային, ապա նա էր ոտքի կանգնում, համբուրում նրան և նստեցնում էր իր տեղը:»[27]

Այսպիսին էր նրա մեղմ վերաբերմունքը բոլորի, մանավանդ կանանց նկատմամբ: Այս ամենը հանդիսանում է աստվածային խորհուրդ մուսուլմանների համար: Պետք է արտահայտել մեղմություն, զգացմունքայնություն և հարգանք նրանց նկատմամբ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Ապրեք նրանց հետ արժանավայել**:» (Ղուրան 4: 19)

Իբն Կասիրը իր մեկնաբանության մեջ ասում է . « Այսինքն, նրանց նկատմամբ ձեր խոսքերը դարձրեք հաճելի, և բարելավեք ձեր արարքները և արտաքին տեսքը ըստ հնարավորության, այնպես, ինչպես այդ ցանկանում եք նրանցից:» Ամենաբարձրյալը ասաց.

« **Կանայք ունեն նույնպիսի իրավունքներ, ինչպիսի պարտավորություններ**:» (Ղուրան 2: 228)

Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուղեկցորդները հետևում էին այս ուղղուն և խորհրդին: Իբն Աբբասը, այս Ումմայի[28] Ղուրանի մեկնաբանը, ասաց.

---

[27]Ատ-Տիրմիզի

[28] Ումմա, ազգ, համայնք

«Իրոք, ես պճնվում եմ իմ կնոջ համար այնպես, ինչպես նա է այդ անում ինձ համար:» Որովհետև Ամենաբարձրյալը ասաց.

« **Կանայք ունեն նույն իրավունքները, ինչպիսի պարտավորություններ**:» (Ղուրան 2: 228)

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ ՈՐԴՈՒՆ, ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐԸ.

Ճանապարհ դեպի ռոմանտիզմ, լավ վերաբերմունք, քնքշություն և հնարավորություն հանդուրժել մեկ այլ անձի առանձնահատկությունները, սա է ճանապարհը, բարեպաշտ մուսուլմանի, ինչը նա պետք է գործնականում կիրառի, ենթակվելով Ալլահի հրամանին: Օրինակ է ծառայում, Սուննայի և միասնական համայնքի հետևորդներից մեկի ուղերձը որդուն իր հարսանիքի օրը, սովորեցնելով կնոջ իրավունքները, որը նա պետք է կատարի: . Նա ասաց.

«Օ, Որդյակ, իրոք, դու կհասնես երջանկության քո տանը, միայն հետևիր տաս ուղերձների, որոնք դու կնվիրես քո կնոջը: Ապա վերցրու ինձանից և անկոտրուն հետևիր դրանց .

Ինչ վերաբերվում է առաջին և երկրորդ ուղերձներին, ապա իրոք, կանայք սիրում են քնքշություն և սիրո խոստովանություն: Գծուծ մի եղիր այդ հարցում քո կնոջ նկատմամբ: Եթե գծուծ լինես, ապա ձեր միջև կստեղծես սիրո պակասի և չորության պատնեշ:

Ինչ վերաբերվում է երրորդ ուղերձին, ապա իրավմամբ, կանանց տհաճ է դաժան տղամարդը: Բայց նրանք գերադասում են թույլ և մեղմ տղամարդու: Այդ դեպքում, դիր ամեն հատկություն իր տեղը: Քանզի, իրոք, այն մոտ է սիրուն և հանգստությանը:

Ինչ վերաբերվում է չորրորդ ուղերձին, ապա կանայք սիրում են ամուսնու մեջ այն, ինչ ամուսինն է սիրում նրանց մեջ, այսինքն, բարի խոսքերը, հաճելի տեսքը, մաքուր հագուստը և անուշաբույրը: Եղիր միշտ այդպիսին:

Ինչ վերաբերվում է հինգերորդ ուղերձին, ապա իրոք տունը կնոջ թագավորությունն է: Այնտեղ նա զգում է գահի տիրակալ և թագուհի: Զգուշացիր ավիրել այդ թագավորությունը, որում նա ապրում է: Նույնպես զգույշ եղիր չիջեցնել նրան այդ գահից: Այդ դեպքում դու կվերցնես նրանից իշխանությունը: Իսկ թագավորի համար չկա ավելի ատելի մարդ, քան նրա իշխանությունը վերցնողը: Նույնիսկ եթե արտաքնապես ապացուցի քեզ ուրիշ բան:

Ինչ վերաբերվում է վեցերորդ ուղերձին, ապա կինը ցանկանում է ունենալ ամուսին, բայց չի ցանկանում կորցնել իր հարազատներին: Զգուշացիր դնել քեզ նրա հարազատներին հավասար, զցելով նրան ընտրության առջև: Քանի որ, նա, նույնիսկ քեզ գերադասելով իր հարազատներից, կկարոտի նրանց, բերելով այդ քո առօրյա կյանք:

Ինչ վերաբերվում է յոթերորդ ուղերձին, ապա կինը արարվել է կոր կոնքից ինչը նրա գեղեցկությունը և գրավչությունն է, այլ ոչ թե թերությունը: Այդ իսկ պատճառով, խիստ մի դատիր նրան, եթե նա սխալվում է, ներողամիտ եղիր: Եթե դու փորձես ուղղել կորությունը, ապա կկոտրես նրան

ամուսնալուծությամբ: Եվ մի լքիր նրան, եթե սխալվել է, այդ միայն կմեծացնի կորությունը և նա ոչ կլսի, ոչ էլ քնքշություն կցուցաբերի: Եղիր ծայրահեղություններից հեռու: Գտիր ոսկե միջինը:

Ինչ վերաբերվում է ութերրորդ ուղերձին, ապա իրոք, կինը արարվել է այնպես, որ անշնորհակալ է ամուսնուն և հարազատներին բարության համար: Եթե ամբողջ կյանքի ընթացքում դու բարերարություն անես և մեկ անգամ ինչ որ սխալ գործես, ապա նա կասի . « Ես երբեք քեզանից բարիք չեմ տեսել:» Ապա, թող այդ հատկությունը չստիպի քեզ ատել կամ լքել նրան: Եթե քեզ դուր չի գալիս այդ հատկանիշը, ապա դուր կգա մեկ այլը:

Ինչ վերաբերվում է իններորդ ուղերձին, ապա իրոք, կինը անցնում է որոշակի փուլեր, երբ նրա մարմինը և հոգին հոգնածություն են զգում: Նույնիսկ Ամենաբարձրյալ Ալլահը այդ օրերին նրան ազատել է որոշ պարտականություններից: Դրանք են աղոթքը և պահքը, մինչ չի վերադառնում նրան նախկին առողջությունը և բնավորությունը: Եղիր մեղմ, այնպես ինչպես Ամենաբարձրյալ Ալլահն է թեթևացրել նրա պարտավորությունները, այնպես էլ դու թեթևացրու խնդրանքները և հրամանները:

Ինչ վերաբերվում է տասներորդ ուղերձին, իմացիր, որ կինը քո գերին է: Ապա գթասիրտ եղիր նրա նկատմամբ և ուշադրություն մի դարձրու նրա թուլություններին և նա կդառնա լավագույն ընկերը և բերկրանքը:

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՄՈՐ ՈՒՂԵՐՁԸ ԴՍՏԵՐԸ,ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԳԻՇԵՐԸ.

Այնպես, ինչպես իսլամական ռոմանտիցիզմը զբաղեցնում է կարևոր դեր տղամարդկանց շրջանում, այնպես էլ այն կարևոր է մուսուլման կանանց շրջանում: Լավ ամուսնական հարաբերությունները և ամուսնու բարի վերաբերմունքը կարևոր խնդիր է: Կարելի է օրինակ բերել Ում Իյասին, Աուֆ իբն Ալյամ աշ- Շեյբանի դստերը: Նրան խնամախոսել էր Ամր իբն Հիջրը, Կինդի թագավորը: Երբ հասավ նրանց առաջին ամուսնական գիշերվա ժամանակը, նրա մայրը մեկուսացավ նրա հետ և սկսեց ուղերձ հղել, որը կարող էր հիմք հանդիսանալ երջանիկ ամուսնական կյանքի և ամուսինու իրավունքների մասին: Նա ասաց.

«Օ. Իմ դուստր, Եթե հնարավոր լիներ ուղերձները թողնել մի կողմ անհրաժեշտ չլինելու պատճառով, ապա ես կանեյի այդ: Բայց ուղերձը հիշեցում է անփույթին, իսկ գիտակիցին գիտելիք: Եվ եթե կինը կարողանար մնալ առանց ամուսնու, ապա նրան բավական կլինեյին ծնողները: Բայց կինը արարված է տղամարդու համար և տղամարդը կնոջ:

Օ, դուստր իմ, դու կլքես շրջապատը, որտեղ մեծացել ես և դուրս կթռչես հարազատ բնից: Մերձավոր կդառնա քեզ անծանոթը և դու կդառնաս նրա իշխանության տակ ստրուկ և պատանդ: Ապա դարձիր նրա համար ստրուկ և նա անմիջապես կդառնա քեզ համար այդպիսին: Հոգ տար տաս բաների մասին և նա կդառնա զանձ քեզ համար:

Ինչ վերաբերվում է առաջին և երկրորդին, նրան խոնարհումն է բավարարվածությամբ և հնազանդությամբ:

Երրորդը և չորրորդը վերաբերվում է նրա հայացքին և շնչառությանը: Թող նրա հայացքը չընկնի ոչ մի տգեղ բանի քո մեջ և թող բացի անուշաբույրից, նա ոչինչ չշնչի:

Հինգերորդը և վեցերորդը վերաբերվում է նրա քնին և սննդին: Իրոք, քաղցի զգացումը մոխրացնում է, իսկ անհանգիստ քունը բարկացնում:

Յոթերորդը և ութերորդը վերաբերվում է նրա ունեցվածքին և երեխաներին հոգ տանելուն: Ունեցվածքում ամենակարևորը բանիմաց ծախսելն է, իսկ ընտանիքում, բանիմաց կառավարելը:

Իններորդը և տասներորդը վերաբերվում է նրա հրամաններին չհնազանդվելուն և գաղտնիքները բացահայտելուն: Քանզի, իրոք, եթե դու չհանզանդվես նրա հրամաններին կամ տարածես նրա գաղտնիքները, չես ապահովի քեզ նրա նենգությունից: Զգույշ եղիր արտահայտելու ուրախություն, երբ նա ինչ որ բանից նեղված է և տխրություն, երբ նա ուրախ է:»

Այս ամենից երևում է այն բարձր աստիճանը, որը զբաղեցնում է կինը իսլամական ռոմանտիցիզմի ստվերում: Սա պատասխան է նրանց, ովքեր պնդում են, որ Իսլամը ճնշում է կանանց: Ինչպե՞ս կարող է ճնշել նրա իրավունքները նա, ով սիրում է և շատ ուղերձներ է անում հոգալով նրա մասին: Այս ամենը պարզ կդառնա գրքի ընթացքում, որտեղ խոսք կգնա Մարգարե Մուհամեդի և նրա կանանց կյանքի ռոմանտիկ կողմերի մասին: Նա մեկն էր, ով հասցրեց մարդկանց Ալլահի Կրոնը, բայց այդ չխանգարեց պատշաճ հոգ տանել ընտանիքին: Նա Խ.Ա.Ո.Ն լակոնիկ արտահայտեց կանանց հոգ տանելը մի քանի խոսքով, որը խոր իմաստ

ունի: Եվ այդ դարձավ ուղերձ ամբողջ Ումմային: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ձեզանից լավագույնը նա է, ով լավ է վերաբերվում իր կանանց: Իսկ ես լավագույն եմ իմ կանանց նկատմամբ:» [29]

Այսպիսով տղամարդու բարերարությունը երևում է նրա ընտանիքի բարերարությունից, որը տանում է սիրո և գութի: Եվ նա Խ.Ա.Ո.Ն լավագույն մարդն է, որի բարերարությունը բերեց մարդկային կատարելության գերագույն աստիճանի, արտահայտելու գութ և սեր և լավագույն փոխհարաբերության բոլոր մարդկանց հետ, մասնավորապես իր կանանց: Որպես ապացույց է հանդիսանում այաթը, որը ընտրության իրավունք է տալիս կնոջը մնալ ամուսնու հետ, ով չունի բավական միջոցներ, թե ոչ: Մեկ անգամ, կանայք խնդրեցին Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) լրացուցիչ միջոցներ իրենց համար, իսկ նա (Խ.Ա.Ո.Ն) այդ հնարավորությունը չուներ: Ու չնայած այդ հանգամանքի, նրանք ընտրել էին Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և մերժել էին այս կյանքը իր հաճույքներով և գոհ էին այն պարզ կյանքով, որ նա էր ընտրել իր համար: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Երբ Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) տրվեց հնարավորություն տալ ընտրության իրավունք իր կանանց, նա (Խ.Ա.Ո.Ն) սկսեց ինձանից, ասելով .

«Ես կցանկանայի քո ուշադրությունը գրավել որևէ բանի, բայց մի շտապիր, մինչ չես խորհրդակցել քո ծնողների հետ:» Նա ասաց. « Նա գիտեր, որ իմ ծնողները երբեք ինձ խորհուրդ չէին տա լքել նրան:» Նա, Աիշան ավելացրեց. « Հետո նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. Իրոք Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

[29] Ալ- Բուխարի

«Եթե դուք ցանկանում եք աշխարհիկ կյանքը և նրա զարդերը, ապա եկեք և ես կտամ ձեզ բարիքը և գեղեցիկ բաց կթողնեմ: Իսկ եթե դուք ցանկանում եք Ալլահին, Նրա Մարգարեին և Հավերժ կյանքը, ապա Ալլահը պատրաստել է ձեզանից բարի արարքներ անողներին հզոր պարգև:» (Ղուրան 33:28-29)

Եվ ես ասացի.« Ի՞նչ խորհուրդ հարցնեմ իմ ծնողներից: Իրոք, ես ցանկանում եմ հասնել Ալլահի և Նրա Մարգարեյի գոհունակությանը և հավերժ կյանքին:» Հետո, ասացի . « Հետո Ալլահի Մարագերյի (Խ.Ա.Ո.Ն)կանայք արեցին նույնը, ինչ ես:»[30]

Եվ այդ առաջնահերթ ցույց է տալիս իրենց սերը նրան (Խ.Ա.Ո.Ն), նրանց գոհունակությունը և կապվածությունը: Նրանք Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մեջ տեսան գեղեցիկ բարք, մեղմություն, քնքշություն հարաբերություններում և նրանց նկատմամբ:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ուներ ինը կին: Նրանց բոլորի հետ նա ապրել է երջանիկ կյանք: Այդպես է ասել իտալացի գրող Լաուրա Վեչի Վալյերին իր « Իսլամի Պաշտպանություն » գրքում, որում նա պատասխան է տալիս նրանց, ովքեր մեղադրում են Իսլամը կրքերին զոհ գնալու մեջ: Նա ասում է . « Մուհամեդը (Խ.Ա.Ո.Ն) իր ամբողջ երիտասարդության ընթացքում, երբ կրքի ուժը ամենահզորն է, և նա ապրում էր այնպիսի հասարակությունում, ինչպիսին էր արաբականը, որտեղ ամուսնությունը, ինչպես հասարակական հաստատություն կորցրել էր իրեն, որտեղ բազմակնությունը նորմա էր, ամուսնալուծությունը մաքսիմալ հեշտ, ամուսնացած էր մեկ կնոջ, Խադիջային (Խ.Ա.Ո.Ն): Նա

[30] Մուսլիմ

բավական մեծ էր նրանից: Նա 'կորցրեց ' այդ քսանհինգ տարին ամուսնացած լինելով միայն մեկ սիրելի կնոջ հետ և երկրորդ անգամ ամուսնացավ Խադիջայի մահից հետո, երբ նա հիսուն տարեկան էր: Նրա (Խ.Ա.Ո.Ն) ամուսնություններից յուրաքանչյուրում կար քաղաքական կամ հասարակական պատճառ: Ամուսնանալով այդ կանանց հետ, նա փորձում էր տալ աստվածավախության օրինակ, կամ հաստատելով մոտիկ հարաբերություններ ուրիշ ազգերի և ցեղերի հետ, նա գտնում էր Իսլամի տարածման նոր ուղիներ: Աիշայից բացի նրա բոլոր կանայք կույս, երիտասարդ և գեղեցիկ չէին: Այսպիսով, կարո՞ղ էր նա լինել կիրք սիրող մարդ:

Նա մարդ էր,այլ ոչ Աստված: Ամուսնանալու դրդապատճառներից էր նաև ազգի շարունակությունը, քանի որ Խադիջայից (Խ.Ա.Ո.Ն) ծնված երեխաները մահացել էին մանկության տարիներին: Եվ նա(Խ.Ա.Ո.Ն) չուներ հնարավորություններ ուսերին առնել մեծ ընտանիքի հոգսը: Եվ չնայած այդ ամենի, նա (Խ.Ա.Ո.Ն) միշտ հետևում էր լիարժեք հավասարության ուղղուն, կապված իր կանանց հետ և երբեք չէր օգտվում նրանցից բաժանվելու իրավունքից: Նա ամբողջովին հետևում էր մյուս մարգարեների ուղղուն, ինչպիսիք էին Մովսեսը և մյուսները, որոնց ոչ ոք չի կարող մեղադրել բազմակնության մեջ: Հնարավոր է,պատճառը այն է, որ մենք մինչ օրս չգիտենք նրանց առօրյա կյանքի մանրամասները, բայց գիտենք ամեն ինչ Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) ընտանեկան կյանքի մասին:»

Իրոք, առաքինի Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) համարվում է մեծ անձնավորություն, ում իմացել է պատմությունը, ով Աշխարհի փոփոխության մեջ մեծ և գործող դեր է խաղացել: Անշահախնդիր ոչ մուսուլման մասնագետների վկայությամբ և նրանց, ովքեր խորացել են Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կյաքի

ուսումնասիրության մեջ, նայելով նրա Ուղերձի խորությանը, ազդեցությանը և տարածմանը ասացին, որ Իսկությունը հաստատել են նույնիսկ Իսլամի թշնամիները: Մակլ Հարթը իր « Պատմության մեջ Հարյուր ազդեցիկ մարդիկ » գրքում ասաց. «Այն որ Մուհամեդը առաջինն է ամենաազդեցիկ պատմական անձանց թվում, կարող է զարմացնել որոշ ընթերցողներին, իսկ մյուսների մոտ առաջացնել ընդդիմություն: Սակայն, նա միակ մարդն է պատմության մեջ, ում գործունեությունը եղել է ծայրահեղ հաջողակ և կրոնական և աշխարհիկ բնագավառներում:»

Այս այն է, ինչ մենք տեսնում ենք մեր շրջապատում: Նրա ուղերձի տարածման արագությունը, օրենքներին հետևելը, ամենաարժեքավորի, Նրա Սուննայի տարածումը: Որքան շատ մարդ է ընդգրկվել նրա կրոնում և որքան քիչ, դուրս եկել այնտեղից: Քանի որ, ճշմարտությունը, նույնիսկ եթե մի փոքր կպնի սրտին և մտնի հոգու մեջ, այնտեղից դուրս չի գա: Օրինակ, եթովպացի Բիլելին, իսլամ ընդունելուց հետո, մտրակահարում են, մեծ քար են դնում կրծքին, երեսը գետին կպած քաշ են տալիս Մեքքայի տաք հարթավայրում, որ նա հրաժարվի իր կրոնից: Բայց այս բոլոր տանջանքները միայն ավելացնում են նրան ամրություն և հաստատակամություն: Նա շարունակում էր կրկնել իր հավերժ խոսքերը . « Միակ, Միակ ...:»

Սադ Իբն Աբու Վակասը մարդ էր, ով բարերար էր իր մորը: Բայց երբ նա ընդունեց Իսլամ, նրա մայը ասաց. « Ես ոչ կուտեմ, ոչ էլ կխմեմ մինչ մահ: Դրանից հետո քեզ խայտառակ կանեն ասելով. «Օ, հարազատ մոր մարդասպան:» Ինչին Սադը պատասխանեց . « Մի արա այդ, մայր: Քանի որ, ես երբեք չեմ թողնի իմ կրոնը:» Դրանից հետո մայրը մեկ օր անցկացրեց անոթի ջանք գործադրելով: Հետո էլի մեկ օր ու գիշեր: Այդ շատ դժվար էր նրա համար:

Երբ ես տեսա այդ, ասացի . «Իմացիր, մայր, երդվում եմ Ալլահով: Եթե դու ունենայիր հարյուր հոգի, որոնք մեկը մյուսի ետևից դուրս գան, ես չեմ թողնի իմ կրոնը, ցանկանում ես կեր, չես ցանկանում, մի կեր:" Երբ մայրը տեսավ այդ, կրկին սկսեց ուտել:

ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՅԻ (Խ.Ա.Ո.Ն) ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո. Ն) և ՀԱՆԳԻՍՏԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Իսլամը մուսուլմանին ցույց է տալիս հանգստի իրավունքի անհրաժեշտություն, որը համապատասխանում է Շարիաթին, որպեսզի հեռանա ալարկոտությունից և հնարավորություն ունենա շարունակել Ամենաբարձրյալ Ալլահին ուղղին նոր ուժերով և ջանքերով: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Թույլ տվեք սրտերին երբեմն հանգստանալ:»[31]

Բայց անհրաժեշտ պայման է անթույլատրելիին չանցնելը: Քանի որ, այդ դեպքում մուսուլմանի կյանքը կվերածվի անիմաստ զվարճանքի և ստրուկը կմոռանա այն, ինչի համար արարվել է: Նրա կոչի սկզբում, Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուղեկցորդները համոզված էին, որ Իսլամը, չորության կրոն է, որը չի ընդունում հանգիստ և թույլատրելի զվարճանք: Խանզալա իբն Խուզեյմ ալ- Խանաֆին ասաց.

«Ինձ հանդիպեց Աբու Բաքրը և հարցրեց . «Ի՞նչպես ես դու Խանզալյա:» Ես պատասխանեցի . «Խանզալյան

[31] Աս-Սահավի

փարիսեցություն է արել:» Նա ասաց. « Փառաբանվի Ալլահը, Ի՞նչ ես դու ասում:» Ես պատասխանեցի . « Մենք նստում ենք Ալլահի Մարգարեյի մոտ, նա հիշեցնում է մեզ Կրակի և Դրախտի մասին և մենք կարծես տեսնում ենք ամեն ինչ մեր աչքերի առջև: Բայց, հենց մենք հեռանում ենք Ալլահի Մարգարեյօից, սկսում ենք զբաղվել կանանց, երեխաների և ունեցվածքի հետ: Եվ մենք շատ բաներ մոռանում ենք:» Աբու Բաքրը ասաց. « Երդվում եմ Ալլահով, մեզ հետ էլ է այդպես պատահում: » Այդ ժամանակ և ես, և Աբու Բաքրը գնացինք Ալլահի Մարգարեյի մոտ: Ես ասացի .« Ալլահի Մարգարե, Խանզյալը փարիսեցություն է անում:» Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց.« Ի՞նչ է պատահել:» Ես բացատրեցի .« Ալլահի Մարգարե, մենք նստում ենք քո կողքին և դու հիշեցնում ես կրակի և Դրախտի մասին և մենք կարծես տեսնում ենք մեր աչքերի առջև: Բայց հենց մենք գնում ենք քո մոտից, սկսում ենք զբաղվել կանանց, երեխաների և ունեցվածքի հետ: Եվ շատ բաներ մենք մոռանում ենք:» Այդժամ Ալլահի Մարգարեն ասաց. «Երդվում եմ Այնով, Ում ձեռքերում իմ հոգին է: Եթե դուք մշտապես լինեյիք այնպիսի, ինչպիսին ինձ մոտ եք և հիշատակեյիք Ալլահին, ապա ձեզ ձեռքսեղմումով կբարեվեյին հրեշտակները ձեր անկողիններում, այլ ոչ թե ճանապարհին: Բայց ամեն դեպքում Խանզալյա, կա ժամ,Ալլահին հիշատակելու և ժամ, թուլանալու:» Նա կրկնեց այդ երեք անգամ:»[32]

Բայց այս տեսանկյունը փոխվեց, երբ Իսլամը կնոջ հետ հանգիստը և նրան երջանկացնելը դարձրեց կրոնի մասնիկ: Եվ այն զարմանալի չէ, քանի որ կրոնը ներառում է հոգու և գիտակցության: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Ամենը, ինչ սկիզբ է առնում Ալլահին չհիշատակելուց, հաճույք և խաղ է,

[32] Մուսլիմ

բացի չորս բաներից . տղամարդու զվարճանքը կնոջ հետ, ձիու վարժեցումը, վայրեր տեղափոխվելը և լողալ սովորելը:» [33]

Այս տեսանկյունը փոխվում է նաև նրանով, ինչ հաղորդում է Ջաբիր իբն Սամուրը . «Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) չէր գնում իր առավոտյան կամ կեսօրվա աղոթքի վայրից այնքան ժամանակ, մինչ արևը դուրս չէր գալիս: Եվ երբ այն դուրս էր գալիս, նա ոտքի է կանգնում: Նրանք զրուցում և հիշում էին տգիտության ժամանակները, ժպիտով և ծիծաղով:»[34]

Եվ ոչ միայն այդ: Նա (Խ.Ա.Ո.Ն) պնդում էր հոգու զվարճանալու և հանգստանալու պարտավորությանը: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց Աբդուլլահ իբն Ումարին (Խ.Ա.Ո.Ն)

«Օ, Աբդուլլահ, ինձ հաղորդել են, որ դու պահք ես պահում ցերեկը և աղոթում ես գիշերը:» Ես ասացի . « Այո, Ալլահի Մարգարե:» Նա ասաց. « Մի արա այդպես, բայց պահք պահիր և կոտրիր այն, աղոթիր գիշերները և քնիր: Քանզի, իրոք, քո մարմինը ունի իրավունքներ և քո աչքերը ունեն իրավունքներ, և քո կինը ունի իրավունքներ և քո հյուրը ունի իրավունքներ:»[35]

1. ԱՋՆԻՎ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ ԷՐ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ.

Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) միշտ հոգ էր տանում կանանց հետ հանգստի մասին, որպեսզի ընտանեկան միջավայր բերի

[33] Ալ- Ասբահանի . Նույնպես այն փոխանցել է ան- Նասային « Ամենը . որտեղ չկա Ալլահի հիշատակում...» խոսքերը:
[34] Մուսլիմ
[35] Ալ-Բուխարի

ուրախություն և երջանկություն: Նա օգտագործում էր ցանկացած հնարավորություն, որպեսզի ուրախացներ և վերացներ տխրությունը և ձանձրույթը իր կանացից: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) Մարագերյի (Խ.Ա.Ո.Ն) կինը ասաց.

«Տոնի օրը, եթովպացիները նվաում էին մզկիթում և ես դիտում էի կզակս Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուսին դրած այնքան ժամանակ, մինչ ես չձանձրացա:»[36]

2. ԱԼԼԱՀԻ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉԷՐ ԴԱՐՁՆՈՒՄ ԱՆՆՇԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՎՐԱ, ՈՐՊԵՍԶԻ ԵՐՋԱՆԿԱՑՆԻ ԻՐ ԿԱՆԱՆՑ.

Մարագրեյի (Խ.Ա.Ո.Ն) սովորեցնում էր Աստվածը և նա (Խ.Ա.Ո.Ն) հոյակապ սովորում էր: Նրան բնորոշ գծերից այնն էր, որ նա չէր դիմում մարդկանց այն բանով, որը նրանց տհաճ էր: Նա (Խ.Ա.Ո.Ն) աչքաթող էր անում աննշան սխալներ որոշ հարցերում, որոնք գալիս էին նրա կանացից: Մանավանդ այն հարցերում, որտեղ չկա Ալլահի Պատվիրանների խախտում: Այս ամենը նա անում էր, որպեսզի չվիրավորի նրանց զգացմունքները: « Փորձել աչքաթող անել » նշանակում է անտարբեր լինել այն գիտակցությամբ, որ դու փորձում ես չնկատել:» Աիշան (Խ.Ա.Ո.Ն) Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կինը ասաց.

««Մեկ անգամ, Ալլահի Մարագերն (Խ.Ա.Ո.Ն) եկավ ինձ մոտ այն ժամանակ, երբ ինձ մոտ երկու աղջիկ էին նստած և նվագում էին: Հետո եկավ Աբու Բաքրը և հարցրեց ինձ կտրուկ « Բերել ես շեյթանին Մարգարեյի տուն:» Եվ այդ

[36] Մուսլիմ

ժամանակ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) շրջվեց դեպի նա և ասաց. « Թող նրանց, օ Աբու Բաքր . չէ որ տոն օրեր են:»»[37]

Նույնպես Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) թաքցնում էր ինձ օտար աչքերից, երբ ես նայում էի եթովպացիներին, ովքեր նիզակներով խաղում էին մզկիթի կողքին և երբ Ումարը փորձեց կանգնեցնել նրանց, Մարագարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Թող նրանց, քանի որ Արֆիդի որդիները իմ պաշտպանության տակ են:»[38]

3. ԱԼԼԱՀԻ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ԿԱՆԱՆՑ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼԸ .

Սիրո արտահայտում է անկեղծ ընկերությունը և էմոցիոնալ հանգստությունը և այն ամենի փնտրտուքը, ինչ սիրած էակին երջանկություն է պարգևում: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ հոգ էր տանում այն բաների մասին, որոնք ուրախություն էին պարգևում կանանց: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց. որ նա Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ներկայությամբ տիկնիկներով էր խաղում: Նա նաև ասաց. « Ինձ մոտ էին գալիս իմ ընկերուհիները, ովքեր թաքնվում էին տանը Ալլահի Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն), իսկ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ուղարկում էր նրանց ինձ մոտ:»[39]

4. ԱԼԼԱՀԻ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ԿԱՏԱԿՆԵՐԸ .

Իսլամական ուղերձներում կա այն, ինչ ուղղում է մարմինն ու հոգին, ինչպես նաև այն, ինչ ուղղում է հոգին և բերում է ուրախություն և երջանկություն: Ալլահի Մարգարեն

[37] Ալ- Բուխարի և Մուսլիմ
[38] Ալ- Բուխարի
[39] Մուսլիմ

(Խ.Ա.Ո.Ն) անփույթ չէր այս պարագայում և տալիս էր նրա իրավունքները և հոգ էր տանում նրա մասին: Նա (Խ.Ա.Ո.Ն) կատակում էր իր հետևորդների և կանանց հետ, ասելով միայն ճշմարտությունը: Հայտնի է, որ հոգին սիրում է կատակներ, քանի որ դրանք հեռացնում են ձանձրույթը և ծուլությունը: Սակայն այն ունի պայման, որ պիտի համապատասխանի Շարիաթին, այնտեղ չպետք է լինի սուտ և չպետք է վնասում որևէ մեկին: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

««Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վերադարձավ Բակիից տուն: Այդ օրը ես գանգատվում էի գլխացավից: Ես ասացի .« Օ, իմ գլուխը » կրկնելով: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Հանգստացիր Աիշա, ես այստեղ եմ: Իմ գլուխը նույնպես ցավում է:» Նա նստեց նրա կողքին, թեքվեց և քնքուշ հարցրեց .« դու չէի՞ր ցանկանում մահանալ ինձանից առաջ: Ես կթաղեյի և կաղոթեյի քեզ համար:» Աիշան պատասխանեց նրան . «Երդվում եմ Ալլահով, դու կանեյիր այդ ամենը և հետո կվերադառնայիր տուն և անց կկացնեյիր գիշերները քո կանանց հետ:» Ալլահի Մարագարեն (Խ.Ա.Ո.Ն) ժպտաց և գնաց քնելու, գանգատվելով գլխացավից:»[40]

5. ԱԼԼԱՀԻ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐԸ.

Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կյանքը զուրկ չէր այն բաներից, ինչը թեթևացնում էր հոգին: Նա (Խ.Ա.Ո.Ն) գնում և զբոսնում էր իր կանանց հետ: ՈՒղերձի մատուցման և Ումմայի կառավարման գործերը չէին շեղում նրան այդ տեսակի հանգստից: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) պատմում է մեզ նրա ճանապարհորդություններից մեկի մասին Ալլահի Մարագարեյի Խ.Ա.Ո.Ն հետ:

[40] Աբդ-Դարումի, ալ- Ալբանի

«Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) եթե գալիս էր գիշերը, ապա գալիս էր Աիշայի մոտ և զրուցում էր նրա հետ ...:»[41]

6. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) ԶՎԱՐՃԱՆՈՒՄ ԷՐ ԿԱՆԱՆՑ ԿԱՏԱԿՆԵՐՈՎ .

Ժպիտը մարդու բնական արտահայտամիջոց է: Այն ունի իր դերը իսլամում: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Եղբորդ ժպտալը բարեգործություն է:»[42]

Այսպիսին է մեր կրոնը, մուսուլմանը պիտի լինի ժպտադեմ և ոչ թե խոժոռ: Խոժոռ դեմքից տուժում են շրջապատի մարդիկ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ժպտում էր և կոչում էր մյուսներին էլ ժպտալ, որպեսզի շրջապատի մարդիկ նույնպես չխոժոռվեյին և որ տարածվեր ուրախության և բարեհամբույրության մթնոլորտը: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մի խուսափեք բարիքից, նույնիսկ ձեր եղբորը ժպիտով դիմավորելուց:»

7 .ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՈԳՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ.

Բնական էր, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սիրում էր կատակել իր ուղեկցորդների հետ: Նույնպես նրա կանայք ստանում էին բարօրության, քնքշության և կատակների իրենց բաժինը, որպեսզի չձանձրանան և հոգիները զվարճանա: Աիշան (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

««Ես բերեցի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) հազիրա[43]: Այդ ժամանակ Սավդան Նրա մոտ էր: Ես ասացի նրան . « Կեր:»

[41] Մուսլիմ
[42] Ատ- Տիրմիզի

Նա մերժեց: Ես ասացի . « Անպատճառ կեր, այլապես ես կաղտոտեմ քո դեմքը:» Նա մերժեց: Այդ ժամանակ ես վերցրեցի հազիրան և աղտոտեցի նրա դեմքը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ծիծաղեց, ձգեց ոտքը և ասաց Սավդային . « Իսկ դու աղտոտի նրա դեմքը:» Այդ ժամանակ, նա աղտոտեց իմ դեմքը: Մարգարեն (Խ. Ա.Ո.Ն) կրկին ծիծաղեց: Մեր մոտով անցնում էր Ումարը: Նա դիմեց . « Օ, Ալլահի ստրուկ: Օ, Ալլահի ստրուկ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) կարծեց, որ նա հիմա ներս կմտնի: Այդժամ նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց Աիշային և Սավդային, որ նրանք լվան իրենց երեսները: Աիշան ասաց. « Դրանից հետո, ես շարունակեցի հարգել Ումարին, Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն)հարգանքի պատճառով:»»[44]

8. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻՇԱՐԺԱՆ ԱՌԻԹՆԵՐԻՆ.

Նրա իմաստություններից մեկ կայանում էր նրանում, որ նա մասնակից էր լինում ամեն մարդու կարևոր առիթին, եթե այն իհարկե չէր հակասում շարիաթի խախտմանը: Աիշա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վերադարձավ կամ Տաբուկի կամ էլ Հայբարի ճակատամարտից: Վարագույրը ծածկում էր տան մի փոքր հատված: Քամին փչեց և բարձրացրեց վարագույրները բացելով տիկնիկները, որոնցով խաղում էր Աիշան: Նա ասաց. « Այս ի՞նչ է, օ, Աիշա:» Աիշան պատասխանեց . « Իմ դուստրերը:» Դրանց մեջ նա տեսավ մի

---

[43] Ալյուրի և յուղի խառնուրդ: Այն կարող է նաև լինել միս, որը կտրտված է քառակուսիների և եփված է աղաջրում: Եփելուց հետո նրան ավելացնում են ալյուր և խառնում են:

[44] Աբու Յայլա ալ- Մոսուլի, ալ- Ալբանին հաստատել է, որ հադիթը լավն է:

ձի, որը ուներ կաշվե թևեր: Նա ասաց. « Իսկ այս ինչ է, ի՞նչ եմ ես տեսնում դրանց մեջ:» Աիշան ասաց. « Ձի:» Նա ասաց. « Ի՞նչ ունի այն:» Նա պատասխանեց . « Թևեր:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Թևերով ձի՞:» Աիշան պատասխանեց. « Մի՞թե դու չես լսել, որ Սուլեյմանը ուներ թևերով ձի: » Այդժամ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) այնպես լայն ժպտաց, որ ես կարող էի տեսնել նրա սեղան ատամները:»[45]

9. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ԱՌԱՔՅԱԼԸ (Խ.Ա.Ո.Ն) ՈՒՐԱԽԱՆՈՒՄ ԷՐ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Կանանց երջանկություն պարգևելը տղամարդու բարերարության նշանն է: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) առաջինն էր, ով ձգտում էր դրան: Աիշան, հավատացյալների մայրը ասաց.

««Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նստած էր: Մենք լսեցինք տղաների աղմուկ և ձայներ: Նա ոտքի կանգնեց և տեսավ պարող եթովպացի կնոջ և տղաների նրա շուրջ: Նա կանչեց ինձ . « Օ, Աիշա, արի այստեղ և տես:» Ես մոտեցա, ծնոտս մոտեցրի նրա ուսին և նայում էի այնտեղից: Նա հարցրեց ինձ:» Չկշտացար նայելուց:» Ես պատասխանեցի . «Ոչ,» որպեսզի տեսնեյի նրա վերաբերմունքը: Հանկարծակի բարձրացավ Ումարը և մարդիկ փախան: Նա ասաց. « Հեռացեք և հանգիստ թողեք նրան:» Աիշան ասաց. « Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Իրոք, ես տեսնում եմ շեյթաններ և ջիններ մարդկանց միջից, որոնք փախչում են Ումարից:» Եվ, նա, Աիշան ասաց. «Այդժամ, ես դադարեցի նայել:»[46]

---

[45] Աբու Դաուդ
[46] Ատ-Տիրմիզի

10. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ ՈՒՐԱԽԱՑՆՈՒՄ ԷՐ ԻՐ ԿԱՆԱՆՑ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ.

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) համար սովորական էր զրուցել իր կանանց հետ և ուրախացնել նրանց, ինչի շորհիվ սրտերը մաքրվում էին ամենօրյա դժվարություններից: Այս ամենը մեծ դեր էր խաղում սիրո ամրության, միասնականության և կապավածության վրա:

Սաֆիյա բնթ Հուեյը (Խ.Ա.Ո.Ն), Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կինը, ասաց.

«Մարգարեն իտիկաֆ էր անում Ռամադան ամսվա վերջին տաս օրերին և այդպիսի մեկ գիշեր ես գնացի նրան այցելելու: Այդ ժամանակ նրա կանայք նրա մոտ էին: Ես զրուցեցի նրանց հետ մեկ ժամ, այնուհետև վեր կացա հեռանալու և նա ասաց. «« Մի շտապիր, ես կգամ քեզ հետ:» Նա ոտքի կանգնեց ինձ ուղեկցելու:»» Նա ապրում էր Ուսամա իբն Զեյդի տանը: Երբ նրանք հասան մզկիթի դռան մոտ, որը Ումմ Սալյամի դռան կողքն էր, տեսան անսարներից երկու մարդ: Նրանք տեսնելով Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) շտապեցին հեռանալ: Մարգարեն ասաց. « Կանգնեք, Նա իմ կինն է Սաֆիյա բնթ Հուեյը:» Նրանք ասացին . « Օրհնյալ լինի Ալլահը, Օ, Ալլահի Մարգարե:» Նա ասաց. «Իրոք, սատանան շարժվում է մարդու մեջ ինչպես արյունը: Եվ ես վախեցա, որ նա ձեր սրտերին որևէ չարիք կբերի:» Կամ նա ասաց. « ինչ որ բան ձեր սրտերում:»[47]

11.ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ.

[47] Ալ- Բուխարի

Իսլամը հաշվի է առնում մարդու տարբեր հատկությունները, որոնք ստեղծել է Ալլահը: Այդ հատկություններից մեկն է տղամարդու և կնոջ միջև եղած զգացմունքը: Ըստ այդմ էլ հաշվի է առնվում սեռական ձգտումը, որը պետք է բավարարել և չճնշել: Հակառակը, մարդ ավելի է բարձրանում, ճիշտ բավարարմամբ: Այն ուղղակի կիրք կամ անասնական բնազդ չէ: Այդ իսկ պատճառով էլ դրա բավարարումը կայանում է ամուսնությամբ, որը դաստիարակվում է մաքրության, ողջախոհության վրա, որն էլ բերում է հանգստություն, զգացմունքների և երկու կողմերի իրավունքների բավարարվածության: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

«**Նրա նշաններից է, որ Նա արարել է ձեզանից կանայք ձեզ համար, որպեսզի դուք գտնեք նրանց մեջ հանգստություն և հաստատել է ձեր միջև սեր և գթասրտություն: Ճշմարիտ, այստեղ նշաններ են մտածող մարդկանց համար**:» (Ղուրան,30:21)

Այդ իսկ պատճառով իսլամը իր հետևորդներին կոչ է անում վաղ ամուսնության, հնարավորությունների և պատճառների առկայության դեպքում: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Օ, երիտասարդներ, եթե ձեզանից մեկը ի վիճակի է ամուսնանալ, ապա թող անի այդ, որովհետև այդ կմղի նրան հեռացնել հայացքը և խուսափել անառակությունից: Իսկ, նա, ով ի վիճակի չէ ամուսնանալ, թող պահք պահի, քանի որ այդ կօգնի ճնշել ցանկությունը:»[48]

Նա (Խ.Ա.Ո.Ն) զգուշացրել է մենաստան գնալուց և աշխարհիկ կյանքից հրաժարվելուց: Անասից, (թող Ալլահը գոհանա նրանով) փոխանցվել է, որ նա ասել է.

[48] Մուսլիմ

«Մեկ անգամ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կանանց տան մոտ եկան երեք մարդ, ովքեր հարցնում էին, թե ինչպես է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) երկրպագում Ալլահին, և երբ նրանց ասացին այդ, նրանք համարելով, որ այդքան էլ շատ չէ, ասացին. Ինչ հեռու ենք մենք Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն), ում ներվել է նախկին և ապագա մեղքերը:» Հետո նրանցից մեկը ասաց. « Ինչ վերաբերվում է ինձ, ապա ես ամեն և ամբողջ գիշեր կաղոթեմ:» Մյուսը ասաց. « Ես անդադար պահք կպահեմ:» Երրորդը ասաց. «Ես հեռու կմնամ կանանցից և երբեք չեմ ամուսնանա:» Որոշ ժամանակ անց, նրանց մոտեցավ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) և ասաց. « Այդ դու՞ք եք ասել այս և այդ: Երդվում եմ Ալլահով, ես ձեզանից շատ եմ վախենում Ալլահից, բայց որոշ օրեր ես պահք եմ պահում, որոշ օրեր ոչ, ես աղոթում եմ գիշերները և քնում եմ և նույնպես ես ամուսնանում եմ կանանց հետ, իսկ նա, ով չի ցանկանում հետևել իմ Սուննային, իսձ հետ կապ չունի:»[49]

Իսլամը կնոջ և տղամարդու միջև զգացմունքը այնքան է մեծարել, որ հավասարեցրել է երկրպագման, որի համար մուսուլմանը պարգևատրվում է այնպես, ինչպես բարի արարքի համար: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Նույնիսկ սեռական հարաբերությունը բարեգործություն է:»Ուղեկցորդները հարցրեցին . « Օ, Ալլահի Մարգարե, մի՞թե նրա համար որ որևէ մեկը բավարարում է իր կիրքը կստանա պարգև:» Մարգարեն պատասխանեց . « Ի՞նչ եք կարծում, եթե մարդ աներ այդ արգելված ձևով, նա մե՞ղ ք կգործեր: Նույնպես, եթե նա անի այդ օրինական ձևով, նա կպարգևատրվի:»[50]

---

[49] Ալ- Բուխարի և Մուսլիմ
[50] Մուսլիմ

Նա ձգտում էր այս խնդրի հարիր լուծմանը, հաշվի առնելով դրա կարևորությունը մուսուլմանի կյանքում: Դրա բավարարման հետևանքով մուսուլմանը դառնում է հոգեպես հավասարակշռված և հանգիստ, որից հետո կարող է անցնել երկրպագման հանգիստ և պարզ գիտակցությամբ:

Մենք ուրիշ օրինակներ կբերենք Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կյանքից, նրա զգացմունքայնությունից, իր կանանց նկատմամբ:

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԴԱՎԱՃԱՆԵԼՈՒ ԱՆՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ողջախոհության օրինակ էր: Նա բացահայտեց մուսուլմանին ինչ անել, երբ գալիս է շեյթանը և գայթակղում է: Ջաբիր իբն Աբդուլան ասաց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Եթե ձեզանից մեկը տեսնի կնոջ, ով նրան դուր կգա, թող գնա իր կնոջ մոտ: Քանզի, իրոք, նրա հետ կլինի նույնը, ինչ իրեն դուր եկած կնոջ հետ:»[51]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԹԱԽԾԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ .

Մարդու արագ վերադարձը ճանապարհորդությունից ապացուցում է սերը և կապվածությունը:Այն ունի նաև շատ օգուտներ, ինչպիսիք են հոգեկան և զգացմունքային հանգստությունը: Այդ իսկ պատճառով Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) խորհուրդը այս հարցում պարզ էր: Նա ասաց.

[51] Ատ Տիրմիզի

«Ճանապարհորդությունը տառապանք պարգևող երևույթ է, քանի որ ձեզանից յուրաքանչյուրը քիչ հնարավորություն ունի լիարժեք սնվելու, ըմպելու և քնելու և այդ իսկ պատճառով թող շտապի ընտանիք, ճանապարհորդության նպատակը կատարելու հետո:»[52]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐՈ և ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ .

Ամեն նվեր ունի իր արժեքը: Սակայն այն ավելի արժեքավոր է, եթե քեզ նվիրում է նա, ով թանկ է: Եվ Մարգարե Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) խորհուրդը պարզ էր, երբ նա ասաց.

«Նվիրեք միմյանց նվերներ: Այն հեռացնում է ատելությունը սրտերից: Եվ թող ոչ մի հարևան չխուսափի տալ մյուս հարևանին նվեր, նույնիսկ ոչխարի մի ոսկոր:»[53]

Այս ամենը կատարվում է սիրո ամրապնդման և հոգևորի կապվածության համար: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) կտակեց նվերներ տալ նրանց,ում մենք սիրում ենք: Նա ասաց.

«Եթե ձեզանից մեկը վերադառնում է ճանապարհորդությունից, ապա թող վերադառնա ընտանիք նվերով:»[54]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

[52] Ալ Բուխարի
[53] Իբն Հաջար
[54] Իբն Հիբան

Սեռական օրգանի պահպանությունը և իր կանանց սահմանափակումը դրանում հանդիսանում է ուժեղ մարդու նշան: Շեյթանը փորձում է վնասել այդպիսի մարդուն և հետևում է նրան: Նա կոչ է անում մարդկանց շնանալ: Քանզի աչքերը շնանում են և նրանց շնանալը հայացքն է: Եվ ականջները շնանում են և նրանց շնանալը լսելն է: Եվ լեզուն է շնանում և նրա շնանալը խոսքն է: Եվ ձեռքերն են շնանում և նրանց շնանալը հպումն է: Եվ ոտքերն են շնանում և նրանց շնանալը քայլքն է: Սիրտը անհագուրդ ցանկանում է, իսկ սեռական օրգանը կամ մերժում, կամ էլ ընդունում է այդ: Այդ մասին մեզ հաղորդել է Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն): Նա այդ հարցում էլ օրինակ էր մեր համար: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

«Երբ հավատացյալ կանայք եկան Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ, նրանց փորձում էին համապատասխան Ալլահի խոսքերի.

« Օ, Մարգարե. Եթե քեզ մոտ գան հավատացյալ կանայք, որպեսզի երդվեն, որ զուգընկեր չեն տա Ալլահին, չեն գողանա, չեն շնանա, չեն սպանի իրենց երեխաներին, չեն զրպարտի այն, ինչ իրենց ձեռքերի և ոտքերի միջև են և կհնազանդվեն քեզ բարի արարքներում, ապա ընդունիր նրանց երդումը և խնդրիր Ալլահից ներում նրանց համար: Քանզի Ալլահը Ներող և Գթասիրտ է:» (Ղուրան 60:12)

Աիշան ասաց. « Հավատացյալ կանանցից նրանք, ովքեր համաձայնվում էին դրան, անցնում էին փորձություն և երբ կանայք համաձայնվում էին, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում էր. « Գնացեք, որովհետև դուք երդվել եք:» Ոչ, երդվում եմ Ալլահով, Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ձեռքը երբեք չի հպվել որևէ անծանոթ կնոջ, նրանք երդվում էին միայն խոսքերով:» Եվ Աիշան ասաց. «Երդվում եմ Ալլահով, Ալլահի

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) երդում էր վերցնում կանանցից այնպես, ինչպես հրահանգել էր Ալլահը և Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ձեռքը երբեք չէր հպվում որևէ օտար կնոջ: Երբ նա երդում էր վերցնում նրանցից, նա ասում էր . « Ես ընդունեցի ձեր երդումը բանավոր:»[55]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏ ՍԻՐՈ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ամոթ չէր համարում բացահայտ արտահայտել սեր իր կանանց: Ավելին, նա կարծում էր, որ բարձրագույն բարոյականություն է լավագույն ընկերությունը և կենակցությունը: Եվ այդ կատարվում էր մինչ իսլամական հասարակությունում, որտեղ կինը չուներ տեղ: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Ես խանդում էի Մարգարեյին, միայն Խադիջեյին, որին չէի տեսել: Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ոչխար էր մորթում, նա երբեմն ասում էր . « Ուղարկեք այս Խադիջեյի ընկերներին:» Մեկ անգամ ես չհամբերեցի և բացականչեցի . « Էլի՞ Խադիջե:» Մարգարեյին այդ դուր չեկավ և նա ասաց. «Ինձ օժտված էր սեր նրան:»[56]

Նույնպես Աիշայից փոխանցված է, որ նա ասաց.

««Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հիշում էր Խադիջեյին, ապա հիշատակում էր նրան լավագույն խոսքերով:» Նա ասաց. « Մեկ անգամ ես խանդեցի և ասացի. « Ինչքան հաճախ ես դու նրան հիշում: Մինչ Ալլահը փոխարինել է քեզ նրանով, ով ավելի լավն է:» Նա պատասխանեց . «Ալլահի չի փոխարինել

[55] Մուսլիմ
[56] Ալ- Բուխարի և Մուսլիմ

ավելի լավով քան նա: Նա հավատաց ինձ, երբ մարդիկ անհավատություն էին ցուցաբերում: Նա հավատաց ինձ, երբ մարդիկ ինձ մեղադրում էին խաբեության մեջ: Նա օգնեց ինձ գումարով, երբ մարդիկ հրաժարվեցին ինձանից: Ալլահը պարգևեց ինձ երեխաներ նրանից և չտվեց ժառանգներ մյուս կանանցից:»»[57]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ .

Իսլամական հրահանգները մատնանշում են այն, որ Ամենաբարձրյալ Ալլահը գեղեցիկ է և սիրում է ամեն ինչ գեղեցիկը, մեծահոգի է և սիրում է մեծահոգությունը, մաքուր է և սիրում է մաքրությունը: Այդպես է մեզ հաղորդել Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո. Ն): Հրաման է մուսուլմանին, որ նա միշտ լինի գեղեցիկ և լավագույնը մարդկանց մեջ: Մանավանդ, դա վերաբերվում էր իր կանանց: Այդ իսկ պատճառով, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հրամայեց հոգալ այդ մասին: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Եթե ձեզանից մեկը սեռական հարաբերություն է ունեցել իր կնոջ հետ և ցանկացել է կրկնել այդ, ապա թող փոքր լվացում անի:»[58] Նա (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց. « Այդ ավելի հաճելի և մաքուր է:»[59]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ.

Ամուսնական կյանքը գործողություն է, որին մասնակցում են երկու ամուսինները: Անհրաժեշտ է հարմոնիա և

[57] Ահմեդ
[58] Մուսլիմ
[59] Աբու Դաուդ

համաձայնեցում, որպեսզի լինի շարիաթի նպատակը, ողջախոհությունը և սերունդը: Այդ իսկ պատճառով այդ հարցում շարիաթի հրահանգը պարզ էր . Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արգելել է կենակցել կնոջը առանց նախնական քնքշանքի: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մի մերձեցեք նրան, մինչ նրան էլ չի հասել այնպիսի կիրք, ինչպիսի քեզ մոտ է, որպեսզի դու չավարտեց նրանից առաջ:» Ես ասացի . « Ե՞ս էլ պիտի այդպես վարվեմ:» Նա ասաց. «Այո, վարվիր այդպես, մինչ չես տեսնի որ նա լցվել է կրքով, ինչպես դու, և միայն դրանից հետո սկսիր:»[60]

Նա(Խ.Ա.Ո.Ն) ուշադրություն էր դարձնում այն բանին, որ կինն էլ ստանա այնպիսի հաճույք, ինչպիսին ամուսինը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Եթե որևէ մեկը ձեզանից կնոջ հետ սեռական հարաբերություն է ունենում, թող այդ անի լավագույն ձևով: Եվ, եթե նա բավարարում է իր կարիքը մինչ կնոջ բավարարվելը, թող չշտապեցնի նրան, որպեսզի նա էլ կարողանա բավարարվել:» [61]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐՈ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ.

Իրական սերը ուղեկցում է մարդուն ամեն իրավիճակներում: Այն փոփոխության չի ենթարկվում ոչ ժամանակին, ոչ էլ իրավիճակներին: Այդպիսին էր Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) իր կանանց հետ: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

---

[60] «Ալ- ՄԳՈՒՆԻ» 8/ 137

[61] Ալ- Հեյսամի

«Երբ ես ամսականի մեջ էի, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) շոյում էր ինձ: Նա դուրս էր հանում իր գլուխը մզկիթից իֆտիկարի ժամանակ և ես,ամսականի մեջ լինելով,հանդերձ, լվանում էի նրա գլուխը:» [62]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ(Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ԹԱՔՑՆԵԼԸ.

Իրոք, ամուսնական կյանքը և նրա գաղտնի կողմերը գաղտնիքների գաղտնիքն են, որի պահպանմանը կողմ է Շարիաթը: Նա դեմ է գաղտնիքների տարածմանը, որը հանգեցնում է անամոթության և բարոյականության անկման: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Դատաստանի օրը վատագույն դրության մեջ կլինի այն մարդը, ով իր կնոջ հետ սեռական հարաբերություն է ունեցել, որից հետո տարածել է նրա գաղտնիքը:»[63]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԵՐԵՍ ՏԱԼԸ.

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) լի էր քնքուշ զգացմունքներով և իր կանանց դիմում էր անուշ խոսքերով յուրաքանչյուրին դիմելով այն անունով, որը նրանք էին նախընտրում: Օրինակ, նա (Խ.Ա.Ո.Ն) Աիշայի անվանում էր « Օ, Կարմրաթուշ » և ցուցաբերում էր քնքշություն կոչելով նրանց փաղաքշական անուններով, որպեսզի արտահայտեր իր սրտի զգացմունքները: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասում էր .« Օ. Աիշա.....»:[64]

---

[62] Ալ- Բուխարի
[63] Մուսլիմ
[64] Մուսլիմ

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն)և ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՄՈՏԵՑՈՒՄԸ, ՆՈՒՅՆԻՍԿ ԿԱՆԱՑԻ ՀԱՏՈՒԿ ՕՐԵՐԻՆ.

Նույնիսկ այն օրերին, երբ Շարիաթի համաձայն կանայք ազատվում էին երկրպագման գործողություններից, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նստում էր իր կանանց հետ, ուտում և ըմպում էր, քնքուշ էր, բայց չէր մոտենում սեռական գործողության: Նա այդ անում էր, բավարարելու նրանց զգացմունքները, բացատրելու աստվածային օրենքների կատարելությունը այդպիսի հարցերում և լուսաբանելու տղամարդկանց ինչ է կարելի այդ դեպքերում և ինչ, ոչ: Քրիստոնեական սուրբ գրքերում ամեն ինչ հակառակն է . ամսականով կինը նկարագրվում է անմաքուր և ամուսնուն հրամայված է հեռու մնալ նրանից: Աիշան, հավատացյալների մայրը, ասաց.

«Երբ ինձ մոտ սկսում էին ամսեկանները, նա շոյում էր ինձ, խորհուրդ էր տալիս հագնել իզար և դրանից հետո միայն հպվում էր: Նա իրեն տիրապետում էր ավելի լավ, քան ձեզանից որևէ մեկը:»[65]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ՋԵՐՄ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ .

Իրոք, Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) բոլոր արարքները հանդիսանում էին խորհուրդ և բացատրություն իր Ումմային գործնական հարցերում, որոնց արդյուքնում մուսուլմանը կարող էր գործածել այդ իր կրոնական կյանքում: Կանանց շոյելը, նրանց հետ քնելը ունեն շարիաթի խորհուրդներ, որոնց նպատակն էր բացատրել կնոջ մարմնի մաքրությունը

[65] Ալ- Բայհակի

և այն, ինչ թույլատրելի է այդ օրերին: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Ալլահի Մարգարեն մնում էր իմ սենյակում իմ ամսականների ժամանակ և Ղուրան էր կարդում:»[66]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿՆՈՋ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ԼՎԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ.

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ հոգ էր տանում զվարճացնել իր կանանց ամեն պարագայում, նույնիսկ սեռական գործողությունից հետո, երբ մարդ առավել ևս սառչում է: Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) միասնական լվացում էր կատարում և կատակում էր իր կնոջ հետ: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

««Ես և Ալլահի Մարգարեն, լվացվում էինք ջուր վերցնելով միևնույն տարրայից, որը մեր միջև էր և նա հանկարծակիի էր բերում և ասում .«Թող ինձ:» Իսկ ես ասում էի . «Թող ինձ:»»[67]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿՆՈՋԸ ՀԱՄԲՈՒՐԵԼԸ .

Զգացմունքների ջերմացնելը ամուսնական հարաբերությունների երկարաձգման և հաջողության գրավական է, որը շնորհել է Ալլահը:Այսպես, հասարակ արարքների և խոսքերի միջոցով կարելի է ձեռք բերել կնոջ սերը և բուռն ցանկությունը, որը պատճառ կդառնա հոգեկան հանգստության: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հոգում էր այդ

[66] Մուսլիմ
[67] Ան- Նասայի

պարզ հարցերը և նրանց չեր մատնում անուշադրության: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

««Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) խոնարհվեց համբուրելու ինձ: Ես ասացի.« Անկեղծորեն, ես պահք եմ պահում:» Նա պատասխանեց . «Ես էլ:» Եվ հետո համբուրեց ինձ:»»[68]

- ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՂՄԵՐԸ.
- Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մարդ է, ինչպես մյուսները: Նրան առավելություն էր տրված մարգարեական ուղերձի և առաքման պատճառով: Նա ուղարկվել էր մարդկանց, որպեսզի նրանց դուրս տանի ստրուկներին երկրպագությունից, Տիրոջ երկրպագության: Նա հասցնում էր Ալլահի Օրենքները: Այս ամենը մեծ պատիվ է, որը Ալլահը տալիս է, ում ցանկանում է: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Ասա. « Իրոք, ես այնպիսի մարդ եմ, ինչպես դուք: Ինձ լուսաբանվել է այն, որ ձեր Աստվածը, Միակ Աստվածն է:» Նա, ով հույս ունի հանդիպել իր Տիրոջը, թող կատարի բարի արարքներ և ոչ ոքի թող չերկրպագի իր Տիրոջը զուգահեռ**:» (Ղուրան 18: 110)

- Մարգարեն ոչ մի աստվածային հատկություն չուներ: Նա ոչ մի գաղտնիություն չգիտեր, նա ոչ օգուտ, ոչ էլ վնաս էր բերում և չեր տնօրինում որևէ բան ունայնության մեջ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

[68] Ալ- Բուխարի

««Ասա. « Ես ի վիճակի չեմ ինձ օգուտ կամ վնաս բերել, եթե այդ չի ցանկանում Ալլահը: Եթե ես իմանայի գաղտնին, ապա կբազմապատկեի ինձ համար բարիքը և չարիքը չեր մոտենա ինձ: Սակայն, ես միայն զգուշացնող, համոզող և ավետիս եմ հավատացյալ մարդկանց համար:»» (Ղուրան 7: 188)

- Չնայած բարձր աստիճանի և հարգանքի, նա (Խ.Ա.Ո.Ն) չէր ցանկանում, որ նրան դասեին ուրիշ կարգի, բացի Ամենաբարձրյալ Ալլահին երկրպագելուց, որի համար էլ նրան ընտրել և պատվել էր Ալլահը: Այդ պատճառով, նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «« Մի մեծարեք ինձ ինչպես մեծարում են քրիստոնյաները Մարիամի որդուն: Ես միայն ստրուկ եմ: Կոչեք ինձ « Ալլահի Ստրուկ և Նրա Առաքյալ:»»[69]
- Այսպիսով նա (Խ.Ա.Ո.Ն) ուներ մարդկային գծեր և հավիտյան չէր այս կյանքում: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Մուհամեդը հանդիսանում է միայն Առաքյալ: Նրանից առաջ էլ կային առաքյալներ: Մի՞թե, եթե նա մահանա կամ սպանվի, դուք ետ կկանգնեք: Ով ետ կանգնի, ոչնչով չի վնասի Ալլահին: Ալլահը կպարգևատրի երախտապարտներին:» (Ղուրան 3: 144)

- Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) բաժին էր հասնում այն, ինչ բաժին էր ընկնում մյուս մարդկանց . նա հիվանդանում, թուլանում և բուժվում էր: Աբդուլլահ իբն Մասուդը, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

««Մեկ անգամ, ես այցելեցի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն), ով ջերմում էր և ասացի նրան . « Ինչ բարձր ջերմություն ունես

[69]Ալ- Բուխարի

դու:» Ես հարցրեցի . « Այդ նրա համար է, որ դու ունես կրկնակի պարգև:» Նա ասաց. «Այո, և յուրաքանչյուր մուսուլմանի, ով տառապանք է կրում, Ալլահը անպատճառ կազատի մեղքերի ծանրությունից, այնպես, ինչպես ծառն է ազատվում իր տերևներից:»[70]

ՆՇՈՒՄ. «Այդ նրա համար է, որ քեզ տրված է կրկնակի պարգև « խոսքերը բացատրվում են Սաադ իբն Աբու Վակասսի խոսքերով, ով ասաց.

««Ես հարցրեցի Ալլահի Մարգարեյին . « Ովքե՞ր են ամենից շատ ենթարկվում փորձության:» Նա պատասխանեց . « Մարգարեները և հետո նրանց նմանները: Մարդուն կփորձեն իր կրոնով, և եթե նա ամուր լինի, նրա փորձությունները կմեծանան, եթե նա թուլություն ցուցաբերի, ապա նրան կփորձեն ըստ իր կրոնի:»»[71]

- Նա սիրում և ատում էր: Ումար իբն ալ – Խատաբը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. «« Մեկ անգամ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ մի մարդ եկավ և ասաց. «Ես ոչինչ չունեմ քեզ գրավ տալու: Բայց ես խնդրում եմ քեզ,մեզ պարտքով գումար տալ, մինչ մենք կունենանք որևէ բան, որ քեզ տանք:»» Ումար իբն ալ- Խատաբը ասաց. «Օ, Ալլահի Մարգարե: Թող իմ հայրն ու մայրը լինեն փրկագին քեզ: Ալլահը քեզ չի պարտավորեցրել անել այդ: Դու տվեցիր ամենը, ինչ ունեյիր: Եվ եթե դու ոչինչ չունես, դու պարտավոր չես անել այդ:» Հետո Ումարը ասաց. « Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) դուր չեկան Ումարի խոսքերը:» Եվ եթե որևէ բան նրան դուր չէր գալիս, այդ

[70] Ալ- Բուխարի
[71] Ալ- Բուխարի

երևում էր նրա դեմքին: Հետո, մի տղամարդ անսարներից ոտքի կանգնեց և ասաց. « Թող իմ մայրն ու հայրը լինեն փրկագին քեզ համար: Տուր և մի վախեցիր չքավոր լինելուց:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Այդ էլ ինձ հրամայված է:»[72]

- Նա ուրախանում և տխրում էր: Երբ մահացավ նրա որդին, Իբրահիմը, նա լալիս էր: Նրա աչքերից արցունք էր գալիս, իսկ Աբդուլռահման իբն Առֆը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. « Դու է՞լ էս լալիս Ալլահի Մարգարե:» Դրան մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .« Օ, Իբն Առֆ, իրոք, այդ, կարեկցանքի արտահայտում է », հետո նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Իրոք, աչքերը լալիս են, իսկ սիրտը տխրում է, բայց մենք ասում ենք միայն այն, ինչ ցանկալի է մեր Տիրոջը: Ճշմարիտ, մենք տխրում ենք քեզ հետ բաժանումից, Օ, Իբրահիմ:»[73]
- Նա լալիս և ծիծաղում էր: Ուսամա իբն Զեյդը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. « Մեկ անգամ, Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) դստեր որդիներից մեկը մահամերձ էր: Դուրստրը խնդրեց նրան (Խ.Ա.Ո.Ն) գալ: Իսկ նա (Խ.Ա.Ո.Ն) փոխանցեց նրան հետևյալ խոսքերը . «Իրոք, Ալլահը վերցնում է և Նրան պատկանում է այն, ինչ Նա տվել է: Նրա մոտ ամեն ինչ որոշակի ժամանակահատված ունի: Թող նա համբերություն և գոհունակություն ցուցաբերի: » Բայց դուստրը նորից ուղարկեց նրա (Խ.Ա.Ո.Ն) ետևից: Որից հետո Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ոտքի կանգնեց: Նրա հետ ոտքի կանգնեցինք ես, Մուազ իբն Ջաբալը, Ուբեյ իբն Քաաբը և Ուբադա իբն Սամիդը:

[72] Ատ- Տաբարի
[73] Ալ- Բուխարի և Մուսլիմ

Երբ մենք ներս մտանք, Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) տվեցին փոքրիկին, երբ նրա հոգին թրթռում էր կրծքում: Նա ասաց. «« Ես համարում եմ, որ նա ասաց. « Նա կարծես թե ազատվեց:» Նա ասաց. « Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արտասվեց: Իսկ Ուբադա իբն Սամիդը ասաց նրան .» Այդ ի՞նչ է, օ Ալլահի Մարգարե:» Նա պատասխանեց . « Այդ գութ է, որը Ալլահը տվել է Ադամի ժառանգներին: Եվ Ալլահը կգթա միայն Իր գթասիրտ ստրուկներին:»»[74]

- Նրան բերում էին և երջանկություն, և տխրություն: Ջաբար իբն Աբու Տալիբը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց իր Եթովպիայից վերադարձի պատմությունը .

«Մենք գնում էինք, մինչ հասանք Մեդինա: Ինձ դիմավորեց Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), գրկեց և ասաց. « Ես չգիտեմ ինչի համար եմ ավելի շատ ուրախանում, Հեյբարի բացմանը, թե Ջաֆարի վերադարձին: Այն համընկնում էր Հեյբարի բացման արարողությանը:»[75]

- Նա սխալվում էր և մոռանում: Նա մոռացավ իր աղոթքներից մեկը և նրան հիշեցրեցին: Աբդուլլահ իբն Ումարը ասաց.

«Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) աղոթում էր կեսօրվա աղոթքը և կքանստեց երկու անգամ: Զույլ Յադեյն ասաց նրան . « Օ, Ալլահի Մարգարե . դու սխալվեցիր մոռանալով, թե՞ աղոթքը կարճ էր:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց . « Ես ոչինչ չեմ մոռացել և աղոթքը կարճ չէր:» Բայց Զույլ Յադեյնը ասաց. « Ոչ, դու իրոք երկու կքանիստ ես արել:» Մարգարեն

[74] Իբն Մաջա
[75] Իբն Հաջար

(Խ.Ա.Ո.Ն) շրջվեց աղոթողների կողմը և ասաց. « Այդպե՞ս է, ինչպես նա է ասում:» Նրանք պատասխանեցին . «Այո:» Որից հետո նա (Խ.Ա.Ո.Ն) տակբիր ասեց և աղոթեց երկու կքանիստ:»[76]

- Նա կատարյալ չէր իր մարդկային հարաբերություններում և կարծիքում: Բայց նա (Խ.Ա.Ո.Ն) կատարյալ էր Ուղերձի հաղորդման մեջ, որը հրաման էր Ալլահից: Մեկ անգամ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անցնում էր արմավենու մոտով: Տեսնելով, թե մարդիկ ինչպես են փոշոտում արմավենին, նա ասաց, որ դրա կարիքը չկա: Եվ նրանք դադարեցին այդ: Սակայն արմավենիները դրանից հետո փչացան: Հետո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրանց . « Իրոք, այդ միայն երթադրություն էր: Եթե այն կօգնի, ապա արեք այդ: Քանզի, իրոք, ես միայն մարդ եմ, ինչպես դուք: Երթադրությունը կարող է ճիշտ կամ սխալ լինել: Բայց այն բանում, երբ ես ասում է Ալլահը ասում է, ես չեմ ստում Ալլահին:»[77]
- Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ մարդկային էր մնում մյուս մարդկանց հետ փոխհարաբերություններում: Նա ասաց.

«Օ, Ալլահ, ճշմարիտ, Մուհամեդը միայն մարդ էր: Կարող էր բարկանալ, ինչպես մարդիկ: Ես Քեզ հետ ուխտ եմ կապել, որը դու երբեք չես խախտի . ցանկացած հավատացյալ, որին ես տառապանք եմ պատճառել, վիրավորել կամ հարվածել եմ, անելով այդ քավության և քեզ մոտենալու համար, որի շնորհիվ դու կմոտեցնես նրան Քեզ Դատաստանի օրը:»[78]

---

[76] Իբն Հաջար
[77] Մուսլիմ
[78] Մուսլիմ

- Նա մարդ էր Ալլահի օրենքները նրանց վրա իրագործելուց: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ես միայն մարդ եմ: Եվ դուք դիմում եք ինձ վիճելի հարցերով: Միգուցե ձեզանից մեկը ավելի պերճախոս լինի իր համոզմունքներում, քան մյուսը և ես կդատեմ նրա օգտին, ըստ նրա ասածների: Այդ դեպքում թող նա, ում ես դատել եմ որևէ բան իր եղբոր իրավունքից, չվերցնի այն: Քանի որ, ես տալիս եմ նրան Կրակի կտոր:»[79]

- Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մնում էր մարդ իր հասարակական կյանքում: Նա ամուսնանում էր և ձգտում էր ժառանգների: Նրա դիրքորոշումը, իրեն նախորդած մարգարեների դիրքորոշում էր: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է .

«**Մենք քեզանից առաջ ուղարկել ենք առաքյալներ և տվել ենք նրանց կանայք և ժառանգներ: Ոչ մի առաքյալ չեր կարող ցուցադրել նշանները, առանց Ալլահի թույլտվության: Ամեն ժամանակ ունի իր ցուցումը**: » (Ղուրան 13:38)

ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՅԻ Խ.Ա.Ո.Ն ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՂՄԸ.

Մենք հիմա կքննարկենք իր կանանց հետ փոխհարաբերության մարդկային կողմը.

[79] Ալ Բուխարի

1. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՍԽԱԼՆԵՐԻ ՆԵՐՈՒՄԸ

Խանդը մարդկային էություն է: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ընդունում այդ իր կանանց կողմից, մեծահոգաբար և շտկում էր արդյունքները քնքշությամբ և իմաստությամբ: Անաս իբն Մալիքը, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

«Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) իր կանանցից մեկի մոտ էր, հավատացյալների մայրերից մեկը ուղարկեց նրան ուտելիք: Եվ այն կինը, ում մոտ էր Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն),այնպես հարվածեց ծառայի ձեռքին, որ ափսեն ընկավ և կոտրվեց: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հավաքեց ափսեյի փշրանքները և ուտելիքը նրա մեջ, ասելով . « ձեր մայրը խանդեց », նա նկատի ուներ հավատացյալների մորը, այսինքն իր կանանցից մեկին: Նա այդպես էր անվանում իր կանանց: Հետո Նա (Խ.Ա.Ո.Ն) խնդրեց ծառային սպասել, մինչ նա կբերի այն կնոջ պատրաստած ուտելիքը, որի մոտ գտնվում էր նա (Խ.Ա.Ո.Ն): Դրանից հետո, Նա (Խ.Ա.Ո.Ն) ուղարկեց ուտելիքով լի ափսե այն կնոջը, ում ուղարկած ափսեն կոտրվել էր: Իսկ կոտրված ափսեյի փշրանքները թողեց այն կնոջ տանը, ով կոտրել էր:»[80]

2.ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՏՐՎԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ .

Խոստացածը կատարելը, սերը պահպանելը, չմեղադրելը, էության և լավ բնավորության հատկանիշներն են: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հիշում էր Խադիջեյին, անում էր այդ լավագույն խոսքերով:» Նա ասաց. « Մեկ անգամ ես

[80] Ալ-Բուխարի

խանդեցի և ասացի.« Որքան հաճախ ես դու նրան հիշում: Այն դեպքում, երբ Ալլահը փոխարինել է նրան, ավելի լավով:» Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .« Ալլահը չի փոխարինել ավելի լավով, քան նա, նա հավատաց ինձ, երբ մարդիկ կասկածում էին: Նա հավատաց ինձ, երբ մարդիկ մեղադրեցին ստի մեջ: Նա օգնեց ինձ գումարով, երբ մարդիկ շրջվեցին ինձանից: Ալլահը տվեց ինձ երեխաներ նրանից, որը չտվեցին մյուս կանանցից ոչ մեկը:»[81]

3.ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ .

Իր ամբողջ կյանքի ընթացքում, մարգարեությունից հետո, թե առաջ, նա երբեք ձեռք չի բարձրացրել հարվածելու որևէ կնոջ: Իհարկե, խոսք չկա նաև նրա կանանց վերաբերյալ: Ակնհայտ է, որ ոչ մի ամուսնական տուն զերծ չէ խնդիրներից: Այդպես էլ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) տները զերծ չէին դրանցից: Այդ ամենով հանդերձ, նա երբեք չէր հարվածում կամ վատ խոսքեր ասում իր կանանց: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով . ասաց.

«Ալլահի Մարգարեն երբեք կյանքի ընթացքում չի հարվածել կնոջ:»

Այդ պարզ է, քանի որ նա ուղարկվել էր որպես գութ Աշխարհներին: Աբդուլահ իբն Ուբեյդը, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

«Երբ կոտրեցին Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ատամը և վնասեցին ճակատը, որից արյուն էր հոսում երեսով մեկ, նրան ասացին . « Օ, Ալլահի Մարգարե, կոչիր Ալլահին նրանց դեմ:» Իսկ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց. «

[81] Ահմեդ

Իրոք, Ալլահը ինձ չի ուղարկել անիծել կամ վատաբանել, այլ ուղարկել է ինչպես ավետիս և զութ: Օ, Ալլահ, ներիր իմ ազգը, քանզի, իրոք, նրանք չգիտեն:»[82]

4. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԿԱՐԵԿՑԱՆՔԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ .

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ամուսնացած էր ինը կանանց հետ: Այդ, իհարկե, ուներ իր պատճառները և հանգամանքները: Այդ պատճառներից էին զութը, կարեկցանքը և երախտագիտությունը նրան, ով հավատացել և հետևել էր, հանդիպելով թափառման և հալածանքի: Այդպիսի օրինակ է նրա ամուսնությունը Սավդե բինթ Զամայի հետ: Նա հիսունհինգ տարեկան էր, իսկ նա հիսուն: Մեքքայի բնակիչները զարմացած էին այդ ամուսնությամբ, քանի որ նա գեղացկուհի չէր և տղամարդկանց համար հետաքրքիր չէր: Նա ուներ հինգ երեխա: Բայց նա շատ մարդկային էր: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ամուսնացավ նրա հետ այդ հատկության և կարեկցանքի շնորհիվ: Այդ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ նա վերադարձավ Եթիովպիայից և մահացավ նրա ամուսինը:

Սակայն որոշ ժամանակ անց Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ցանկացավ ամուսնալուծվել, կարեկցանքից ելնելով, որպեսզի նրան չծանրաբեռնի ամուսնական պարտականություններով: Երբ կինը իմացավ այդ, նա ասաց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) .

«Մի ամուսնալուծվիր, պահպանիր ինձ քեզ հետ: Իսկ ինձ բաժին ընկած օրը տուր Աիշային:» Եվ այդ ժամանակ լուսաբանվեց հետևյալ այաթը.

[82] Ալ- Բայհակի

«Եթե կինը զգուշանում է, որ ամուսինը անբարյացակամություն կարտահայտի կամ էլ կշրջվի նրանից, ապա չի լինի մեղք նրանց վրա, եթե խաղաղությամբ հմաձայնության գան, քանզի խաղաղ որոշումը լավ է:» (Ղուրան 4:128)

Նա, թող Ալլահը գոհանա նրանով, հոգացություն ցուցաբերեց Աիշային, մերձեցնելով նրան ամուսնուն, Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն):»[83]

5. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ԱՌԱՔՅԱԼԸ և ԳՈՒԹԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ .

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մտավ մզկիթ և տեսավ կախված պարան երկու սյուների միջև: Այդ ժամանակ, նա (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց . « Ի՞նչ է սա:» Պատասխանեցին. « Այդ Զեյնաբի պարանն է: Երբ նա հոգնում է աղոթքի ժամանակ, բռնվում է դրանից:» Այդ ժամանակ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Հանեք այդ: Եթե ձեզանից որևէ մեկը հոգնում է աղոթքում, թող նա նստի:»[84]

Իսլամը աստվածային կրոն է: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) չէր ցանկանում ծանրաբեռնել իր կանանց այնպիսի երկրպագությամբ, որը նրանց ուժերից վեր է, որպեսզի հետևանք չլիներ իրենց հավերժ կյանքում: Այլ կերպ չէր կարող լինել: Նա (Խ.Ա.Ո.Ն) մեկ անգամ ասաց իր հետևորդներից մեկին, ով երկրպագության մեջ էր անընդհատ և մերժում էր այս կյանքի թույլատրելի հաճույքները: « Ճշմարիտ, քո աչքերը ունեն իրավունք քո վրա և քո մարմինը ունի իրավունք քո վրա և քո կինը ունի

[83] Ատ-Տիրմիզի
[84] Մուսլիմ

ունի իրավունք քո վրա և քո հյուրը ունի իրավունք քո վրա և քո ընկերը ունի իրավունք քո վրա։»

6. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՋԱՆՔԵՐԸ ՇԱՀԵԼՈՒ ԻՐ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆԸ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) շատ մեղմ մարդ էր իր մարդկանց, մանավանդ կանանց նկատմամբ: Նա համբերատար լսում էր նրանց վատ վերաբերմունքը, փակում էր աչքերը այդ ամենի վրա, լուռ տանում էր և ներում նրանց սխալները, որոնք չէին հակասում շարիաթին: Այս ամենը Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) դիմավորում էր ժպիտով, որը իր մեջ պարուրում էր սեր, ներում և քնքշանք: Հարկ է մտորել նրա մեղմության սահմանի մասին իր կանանց նկատմամբ, երբ մեկ անգամ Աիշան ձայնը բարձրացրեց նրա (Խ.Ա.Ո.Ն) վրա կապված կենցաղային հարցի հետ: Նրանց լսեց Աիշայի հայրը, Աբու Բաքրը, թող Ալլահը գոհանա նրանով: Երբ նա ներս մտավ, բռնեց աղջկան, որպեսզի դաս տա: Նա ասաց. « Որպեսզի այլևս չլսեմ, որ դու բարձրացնես քո ձայնը Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) վրա: » Բայց Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հեռացրեց նրան և Աբու Բաքրը, թող Ալլահը գոհանա նրանով, հեռացավ բարկացած: Երբ Աբու Բաքրը հեռացավ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Տես, թե ինչպես ես, քեզ պաշտպանեցի տղամարդուց:» Ասաց. « Դրանից հետո, Աբու Բաքրը սպասեց մի քանի օր և հետո թույլտվություն խնդրեց Ալլահի Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն) ներս մտնել: Նա տեսավ, որ նրանք հաշտվել են: Եվ նա, թող Ալլահը գոհանա նրանով ասաց նրանց . « Վերցրեք ինձ ձեր հաշտության մեջ այնպես, ինչպես

վերցրեցիք պատերազմի մեջ:» Եվ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց .« Մենք այդ արդեն արել ենք ....:»[85]

7. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀՈԳՍԸ ԹԵԹԵԱՑՆԵԼԸ.

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուղին մարդկանց համագործակցելն էր, մեղմությամբ և հակիրճությամբ:

Անաս իբն Մալիքը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. « Մեկ անգամ մեկ բեդվին մտնելով մզկիթ, միզեց: Մարդիկ սկսեցին բղավել, բայց Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արգելեց նրանց այդ, և բեդվինի միզելուց հետո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հրամայեց բերել մեկ դույլ ջուր և լցնել միզած մասում:»[86]

Աիշան, հավատացյալների մայրը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մեղմության մասին հետևյալը:

«Ինձ և Հաֆսային ուտելիք բերեցին: Այդ օրը մենք պահք էինք պահում:» Մեկը մյուսին ասաց. «Կընդհատե՞ս պահքը:» Մյուսը պատասխանեց . «Այո:» Եվ նրանք երկուսն էլ ընդհատեցին պահքը: Հետո նրանց մոտ եկավ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) և նրանցից մեկը ասաց նրան . « Օ, Ալլահի Մարգարե: Մեզ նվեր բերեցին և մենք ցանկացանք փորձել այդ և ընդհատեցինք պահքը:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց . « Ոչինչ, պահք կպահեք մեկ այլ օր,դրա փոխարեն:»[87]

---

[85] Աբու Դաուդ
[86] Ալ-Բուխարի
[87] Մուսլիմ

8. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ .

Ուտելիք վերցնելը և քո ձեռքով կնոջ բերանը դնելը և հետո ջուր տալը,համարվում է արարք, որը գրավում է նրա սիրտը: Այն, քո լավագույն վերաբերմունքի և սիրո արտահայտման նշան է: Ավելին, այն հանդիսանում է բարեգործություն, որի համար կա պարգև Ալլահից: Այս կապի միջոցով պարզ է դառնում ինչն է կարևոր այս և ինչն է կարևոր մյուս կյանքում: Բացի այդ, այս ամենի միջոցով ուժեղանում են զգացմունքները և կինը հանգստություն է ձեռք բերում: Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) ասաց Սաադ իբն Աբու Վակկասին.

«Քո բոլոր բարի արարքների համար, որոնք արված են հանուն Ալլահի, դու կստանաս պարգև: Նույնիսկ եթե այդ ուտելիքի մի կտոր լինի, որը դու դնում ես քո կնոջ բերանը:»[88]

9. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ԴԺԿԱՄՈՒԹՅԱՆ ՉԱՐՏԱՀԱՅՏԵԼԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ .

Զգացմունքների մասին հոգ տանելը թափանցիկ հոգու և բնավորության նշան է: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ հոգում էր իր կանանց զգացմունքների մասին և երբեք չէր բարկանում նրանց վրա այն բաներում, որոնք, նրանց ցանկություններից կախված չէին: Իբն Աբբասից փոխանցվել է, որ Ամմար իբն Յասիրը պատմեց .

«Մեկ անգամ, Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մնաց, գիշերելու Ուլատ- ել- Ջայշում և նրա հետ էր Աիշան, որի մոտ պոկվել և կորել էր զաֆարյան օնիկսից վզնոցը: Մարդիկ ուշացան մինչ լուսաբաց փնտրելով այն և նրանց մոտ վերջացավ ջուրը: Աբու Բաքրը, թող Ալլահը գթա նրան, բարկացավ և ասաց. «

[88] Ալ- Բուխարի

Դու մարդկանց ետ ես պահել և նրանք ջուր չունեն:» Եվ Ամենաբարձրյալ Ալլահը լուսաբանում ուղարկեց Իր Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն), որտեղ թույլ էր տրվում մաքրվել մաքուր ավազով: Եվ մուսուլմանները ոտքի կանգնեցին Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ և սկսեցին հարվածել հողը ձեռքերով: Հետո նրանք բարձրացնում էին իրենց ձեռքերը, առանց ավազ վերցնելու և սրբում էին երեսները և ձեռքերը մինչ ուսերը և հետո դաստակներից մինչև թևատակերը:»[89]

10. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն), ԶԱՐԴԵՐԸ, ԱՆՈՒՇԱԲՈՒՅՐԸ և ՄԱՔՐՎԵԼԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ .

Գեղեցիկ արտաքինը, անուշ բույրը գրավում է մյուս մարդկանց և հանգստացնում է սրտերը և աչքերը: Աիշան, Մարգարեյի(Խ.Ա.Ո.Ն) կինը ասաց.

«Կարծես ես հիմա նայում և տեսնում եմ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) գլխի անուշաբույր փայլը, երբ նա մտնում էր իհրամի վիճակ:» Հադիթի մեկ այլ տարբերակում ասվում է . «Եվ տեսնում եմ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մազերի բացվածքում մսկի անուշաբույր փայլը:»[90]

Այդ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) բնական վիճակն էր, ամեն պարագայում լինել լավագույն տեսքով: Նույնիսկ քնելուց առաջ նա կատարում էր ծիսական լվացում:

Անաս իբն Մալիքը, թող Ալլահը գոհանա նրանով, նրա ծառան, որին պատիվ էր վիճակվել օգնել Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) տաս տարի, ասաց.

---

[89] Ան –Նասայի, Ալ- Ալբանին հավաստիացրեց հադիթը:
[90] Ան- Նասայի

«Ես երբեք չէի շնչել ավելի լավ անուշաբույրի կամ մուսկուսի բույր, քան Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) բույրն էր: Եվ ես երբեք չէի շոշափել փափուկ մետաքս, որը Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ձեռքերից փափուկ էր:»[91]

11. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՍԻՐՈ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ .

Ինչպես մեզ հաղորդել է Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ամոթխածությունը բարիք է բերում: Բացի այն դեպքերից, երբ այն մուսուլմանին կարող է կորուստ բերել այս կամ այն աշխարհում: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացահայտ արտահայտում էր իր սերը իր կանանց նկատմամբ, որպեսզի հետևորդները նույնպես անեին այդ իրենց կանանց: Այս ամենը սիրո տևականության և համատեղ կյանքի գրավական է: Ամր իբն ալ- Ասը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

««Ես եկա Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ և հարցրեցի . « Ու՞մ ես դու սիրում ամենից շատ:» Նա պատասխանեց . «Աիշային:» Ես հարցրեցի .« Իսկ տղամարդկանցի՞ց:» Նա պատասխանեց .« Նրա հորը:» Ես հարցրեցի .« Իսկ ու՞մ հետո:» Նա պատասխանեց .« Ումար իբն ալ- Խատաբին » և այլ մարդկանց անուն նույնպես տվեց: Իսկ ես լռեցի, վախենալով, որ նա իմ անունը կասի վերջում:»»[92]

12. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՎԱԽԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ .

Վախը բնական զգացում է, մինչ այն չի անցնում բնական մարդկային վախից: Դրանից ավելի արդեն հիվանդություն է:

---

[91] Մուսլիմ
[92] Ալ- Բուխարի

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վախենում էր իր կանանց համար և անհանգստանում էր, որ նրանց չհասնի այն, ինչ տհաճ է: Անասը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Մեկ անգամ նա, Աբու Տալհան ուղևորվեցին Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) և նրա կնոջ, Սաֆիայի հետ: Նա նստեցրեց կնոջն իր հետ, ուղտի ետևի մասում: Երբ նրանք անցել էին ճանապարհի մի մասը, ուղտը սայթաքեց և գցեց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և նրա կնոջը: Աբու Տալհան թողեց իր ուղտը, մոտեցավ Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և ասաց. « Օ, Ալլահի Մարգարե, թող Ալլահը ինձ դարձնի փրկագին քեզ: Դու չե՞ս վնասվել:» Նա պատասխանեց .« Ոչ, բայց դու օգնիր կնոջը:» Աբու Տալհան ծածկեց իր դեմքը հագուստի մի մասով և գնաց կնոջ մոտ: Հետո ծածկեց նրան հագուստով և կինը ոտքի կանգնեց: Հետո նա օգնեց նրանց բարձրանալ և նստել ուղտի վրա:» [93]

13. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն)և ՀՈԳԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ .

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սիրում էր իր ընտանիքին բարիք անել և հոգում էր նրա բարգավաճմանը: Նա (Խ.Ա.Ո.Ն) առանձնապես հոգ էր տանում գոհացնել աշխարհի Տիրոջը, հեռանալով Կրակից և մոտենալ Դրախտին: Այդ է հանդիսանում հաջողությունը, որի մասին Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Յուրաքանչյուր հոգի կճաշակի մահը, բայց միայն հարության օրը, դուք կստանաք ձեր պարգևը լիարժեք» Ով կհեռացվի Կրակից և կմտնի Դրախտ, հաջողություն կունենա, իսկ աշխարհիկ կյանքը միայն խաբեության հաճույք է:» (Ղուրան 3: 185)

[93] Ալ- Բուխարի

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ իր ընտանիքը ուղղում էր դեպի բարիք: ՈՒմմ Սալյաման, թող Ալլահը գոհանա նրանով, Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կինը, ասաց.

««Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վախեցած արթնացավ գիշերը և ասաց. « Օրհնյալ է Ալլահը: Որքան է ուղարկել Ալլահը իր Գթասրտության գանձերից և որքան է ուղարկել գայթակղություններից: Ո՞վ կարթնացնի սենյակի տերերին: Նա նկատի ուներ իր կանանց, որպեսզի նրանք աղոթեն գիշերը:[94] Որքան հագնված [95] այս կյանքում, կլինեն մերկ[96], հավերժ կյանքում:»»[97]

14. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՉԱՅՑԵԼԵԼԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ .

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) չէր սիրում կասկածները և խանդը, որոնք անցնում էին բանական սահմանները: Նա (Խ.Ա.Ո.Ն) սիրում էր տեսնել իր կանանց լավագույն տեսքով: Այդ ամենը սիրո ամրապնդման համար էր: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հանկարծակի չէր գալիս նրանց մոտ երկար ճանապարհորդությունից հետո: Նա նախապես զգուշացնում էր, որ կանայք բավարար ժամանակ ունենան իրենց կարգի բերելու և զարդարվելու:

Ջաբիր իբն Աբդուլան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

«Մենք գնացել էինք ճանփորդության Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ և երբ վերադարձանք և ցանկացանք մտնել, նա ասաց. « Մի շտապիր, որպեսզի մենք մտնենք գիշերը, թող զզզված

---

[94] Որպեսզի նրանք չվստահեն այն փաստին, որ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կանայք են և որպեսզի հեռանան գայթակղությունից:
[95] Այսինքն, բարիքներով շրջապատված:
[96] Այսինքն, նրանք չեն ունենա այդպիսի բարիք:
[97] Ալ- Բուխարի

մազերով կանայք սանրվեն, իսկ նրանք, ում ամուսինները հեռու էին, հանեն մարմնի մազերը:»[98]

15. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ(Խ.Ա.Ո.Ն) և ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ .

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) առատաձեռն էր: Նա գերադասում էր բարիք տալ իր ընտանիքին: Նա կիսվում էր նրանց հետ այնով, ինչ ձեռք էր բերել, կամ նվեր էր ստացել: Չէ որ նա ասել էր .

«Եթե Ալլահը ձեզանից որևէ մեկին բարիք է ընծայել, թող սկսի իրենից կամ իր մերձավորներից:»[99]

Նրա (Խ.Ա.Ո.Ն) խոսքերը ուղղակի օրինակ չէին: Հակառակը, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) դրանք իրականացնում էր: Անաս իբն Մալիքը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Ումմ Սուլեյմը նրա հետ ուղարկեց արմավների սկուտեղ: Նա ընդունեց այդ, վերցրեց մի քիչ և ուղարկեց իր կանանց մի քանիսին: Հետո, էլի վերցրեց մի քիչ և ուղարկեց իր կանանց: Իրոք, նա մեկ անգամ չէ, որ արեց այդ, չնայած նրան այդ արմավները շատ էին դուր գալիս:»[100]

16. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ .

«Ով համեստություն ցուցաբերի հանուն Ալլահի, նրան Նա կմեծարի:» Այս խոսքերով Ալլահի Մարգարեն դիմում էր իր հետևորդներին: Նա (Խ.Ա.Ո.Ն) այդպես էր մարդկանց վերաբերվում իրական կյանքում: Եվ նրա կանայք

---

[98] Աբու Դավուդ

[99] Ատ-Տաբարանի, ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:

[100]Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը

բացառություն չէին: Անաս իբն Մալիքը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Երբ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վերադարձավ Հեյբարայից Մեդինա, նրա կին Սաֆիյան նրա հետ էր: Ես տեսա, թե նա ինչպես էր կնոջ համար ետևից տանում թիկնոցը: Նա նստեց իր ուղտի մոտ, հետո դեմ տվեց իր ծունկը, իսկ Սաֆիյան իր ոտքը դրեց, որպեսզի հեծնի ուղտը:»[101]

17. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՍԽԱԼՆԵՐԸ ՆԵՐԵԼԸ.

««Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) իր կանացից մեկի մոտ էր, հավատացյալների մայրերից մեկը, ուղարկեց նրան ափսե ուտելիքով: Եվ այն կինը, ում մոտ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) էր, հարվածեց ծառայի ձեռքին այնպես, որ ափսեն ընկավ և կոտրվեց: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հավաքեց ափսեյի փշուրները և կերակուրը ասելով .«Խանդում է ձեր մայրը:» Նա ի նկատի ուներ հավատացյալների մորը, այսինքն իր կանացից մեկին: Հետո նա (Խ.Ա.Ո.Ն) խնդրեց ծառային սպասել, մինչ նա կերակուր կբերի այն կնոջից, որի մոտ է նա (Խ.Ա.Ո.Ն): Դրանից հետո նա (Խ.Ա.Ո.Ն) ուղարկեց ափսեն այն կնոջը, ում ափսեն կոտրվել էր: Իսկ փշրված ափսեյի կտորները թողեց այն կնոջ մոտ, ով արել էր այդ:»»[102]

18. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ.

Իր մեղմությամբ և զգացմունքայնությամբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հասկանում էր իր կանանց, զգում էր նրանց և

[101]Ալ- Բուխարի
[102] Ալ- Բուխարի

ներում էր այն չարիքը, որ երբեմն նրանք անում էին: Աիշան, հավատացյալների մայրը, ասաց.

««Մեկ անգամ, Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց ինձ . « Իրոք, ես գիտեմ երբ ես դու գոհ ինձանից և երբ բարկացած:» Ես հարցրեցի . « Որտեղի՞ց դու գիտես այդ:» Նա պատասխանեց .« Երբ դու գոհ ես ինձանից, դու ասում ես .« Ոչ, երդվում եմ Մուհամեդի Տիրոջով», իսկ երբ բարկացած ես, ասում ես .« Ոչ, երդվում եմ Իբրահիմի Տիրոջով:» Ես ասացի. « Այո, բայց երդվում եմ Ալլահով, Օ, Ալլահի Մարգարե, ես բացի քո անունից ոչինչ չեմ փոխում:»»[103]

19. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԴԱՐ ԼԻՆԵԼԸ .

Իր կանանց նկատմամբ արդարությունը, հասնում է կատարելության: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արդար էր իր կանանց հետ բոլոր հարցերում, և ճանապարհորդության ժամանակ և կենցաղում: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

«Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ոչ ոքի չէր գերադասում մյուսից ժամանակի տրամադրման հարցում: Ոչ մի օր չի եղել, որ նա չայցելի մեզ բոլորիս: Նա մոտենում էր իր յուրաքանչյուր կնոջը, առանց սեռական հարաբերության, մինչ չէր գնում նրա մոտ, ում հերթն էր և մնում էր գիշերը:»[104]

Նույնիսկ հիվանդության ժամանակ, նա չդադարեց արդար լինել: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

---

[103] Ալ-Բուխարի
[104] Աբու Դաուդ

««Իր հիվանդության ժամանակ, Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անընդհատ հարցնում էր .« Որտե՞ղ եմ ես լինելու այսօր, որտե՞ղ եմ ես լինելու վաղը:» Նա (Խ.Ա.Ո.Ն) անհամբերությամբ սպասում էր Աիշայի օրվան, և երբ եկավ իմ օրը, նա (Խ.Ա.Ո.Ն) մահացավ իմ ձեռքերում և թաղվեց իմ տանը:»»[105]

[105] Ալ- Բուխարի

ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ Խ.Ա.Ո.Ն և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ.

1. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ .

Ինչին էլ որ վերաբերվի, մեղմությունը զարդարում է այդ: Իսկ երբ այն կորչում է, այլանդակում է ամեն ինչ: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) դաստիարակում էր իր Ումման առաքինի խորհուրդներով: Նա, նրա ուղեկցորդն էր ամեն հարցերում: Նա սիրում էր մեղմություն և կոչ էր անում իր կանանց: Նա հրամայում էր, լսել էր տալիս և ասում էր միայն այն, ինչ դժվար չէր նրանց համար: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրան .

« Օ, Աիշա, ցուցաբերի մեղմություն: Քանի որ, իրոք, երբ Ալլահը բարիք է ցանկանում տան բնակիչներին, ապա նրանց մեղմություն է ներշնչում:»[106]

2. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼԸ.

Նրա Խ.Ա.Ո.Ն բարերար հատկանիշներից էր նաև, այն, որ չէր հրաժարվում օգնել իր կանանց որոշ աշխատանքներում: Աիշային հարցրեցին.

«Ի՞նչ էր անում Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) տանը:» Նա պատասխանեց . «Կարկատում էր իր սանդալները և անում էր այն, ինչ տղամարդն է անում տանը:» Իսկ հադիթի մյուս

[106] Ալ- Մունզիրի

տարբերակում ասվում է . «« Նա ասաց. « Այն ինչ անում է ձեզանից յուրաքանչյուրը իր տանը, կարկատում է իր սանդալները, մաքրում և կարկատում էր իր հագուստը:»»

3. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՆՔՆ ԻՐԵՆ ՕԳՆԵԼԸ .

Մեզնից յուրաքանչյուրը ունի իր հատուկ ցանկությունները: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ օգնում էր ինքն իրեն, ցանկանալով թեթևացնել և օգնել իր կանանց: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց, երբ նրան հարցրեցին .

««Ի՞նչ էր անում Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) տանը:» Նա պատասխանեց . « Նա մարդ էր, մաքրում էր իր հագուստը, կթում էր ոչխարին և օգնում էր ինքն իրեն:»»[107]

4. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԾԱԽՍԵՐԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

Ունեցվածքի ծախսերը սկզբունք է, որը Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) դրեց իր հետևորդների հոգիներում: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Իրոք, Ալլահը առատաձեռն է և սիրում է առատաձեռնություն: Մեծահոգի է և սիրում է մեծահոգություն:»

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) առատաձեռն վատնում էր իր կանանց համար և ժլատություն չէր անում: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Դինարը, որը դու ծախսել ես Ալլահի ճանապարհին և դինարը, որը դու վատնել ես ստրուկի ազատման համար, և

[107] Ազ -Զահաբի

դինարը, որը դու վատնել ես աղքատին և դինարը, որը դու վատնել ես ընտանիքի համար, սակայն ավելի բարձր պարգև կլինի այն դինարի համար, որը դու վատնել ես քո ընտանիքի համար:»[108]

Ավելին, նա (Խ.Ա.Ո.Ն) այդ պարտադիր պայման դարձրեց տղամարդուն, իր ընտանիքի համար: Երբ հետևորդները հարցրեցին նրան (Խ.Ա.Ո.Ն)

«Ի՞նչպիսին է կնոջ իրավունքը ամուսնու վրա:» Նա պատասխանեց . «Կերակրել նրան, եթե ինքն ուտում է, հագցնել նրան, եթե ինքն հագնվում է, չհարվածել երեսին և չայլանդակել, չլքել, եթե միայն տանը:»[109]

5. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՆԳԻՍՏԸ.

Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) ջանում էր հանգիստ պարգևել կանանց և անում է ամեն հնարավորը: Մանավանդ, ճանապարհորդության ժամանակ, որը հանդիսանում էր ծանր: Այդ իսկ պատճառով նա (Խ.Ա.Ո.Ն) անհանգստանում էր, որ նրանք կգիոգնեն:

Անաս իբն Մալիքը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Մեկ անգամ, երբ Ումմ Սուլեյմը գտնվում էր կանանց հետ և նայում էին ուղեբեռին, Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ծառան, Անջաշան քշում էր ուղտերը շատ արագ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրան . « Օ, Անջաշա, կամաց, քանի որ նրանք ում դու քշում ես, շշեր են տանում:»[110]

---

[108] Մուսլիմ
[109] Աբու Դաուդ
[110] Ալ- Բուխարի

Նա (Խ.Ա.Ո.Ն) այդպես ասաց, քանի որ նրա կանայք կանանց բաժնում էին, որը կպցված էր ուղտի վրա: Իսկ ծառան քշում էր ուղտերին բարձր ձայնով, որը կարող էր ստիպել նրանց արագ գնալ: Այդ իսկ պատճառով Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վախենում էր իր կանանց համար:

6. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՎԱՏ ՎԱՐՔԻՆ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատասխանում էր իր կանանց վարքին մեծ ներումով և հանդուրժողականությամբ, ներելով այն, ինչը գալիս էր նրանցից այն հարցերում, որտեղ չկա Շարիաթից շեղումներ: Իսկ անզսպության պոռթկումները նրա դեմ, ավելացնում էին նրա մեղմաությունը: Ումար իբն ալ- Խատաբը, թող Ալլահը գոհանա նրանով,ասաց.

«Մենք քուրեյշ ցեղի մարդիկ իշխում էինք կանանց: Իսկ երբ մենք եկանք անսարների մոտ, ապա այնպես ստացվեց, որ կանայք էին իշխում նրանց: Այդ ազդեց մեր կանանց վրա, նրանք սկսեցին վերցնել անսար կանանց վարքը: Մեկ անգամ, իմ կինը սկսեց բղավել և սովորեցնել ինձ: Ես հանդիմանեցի, որ նա այդպես չանի: Իսկ նա ասաց.« Ի՞նչու դու չես ուզում որ ես սովորեցնեմ քեզ: Երդվում եմ Ալլահով, որ Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կանայք սովորեցնում են նրան:Եվ նույնիսկ նրանցից մեկը, թողեց նրան մեկ օր, մինչև գիշեր:» Այդ ինձ անհանգստացրեց և ես ասացի նրան .« Նրանք, ովքեր այդպես վարվում են շատ խիստ խաբվում են:» Հետո նա հավաքեց իմ հագուստները, իջավ և գնաց Հաֆսայի մոտ ասելով .« Օ, Հաֆսա, ձեզանից որևէ մեկը վիճու՞մ է Մարգարեյի հետ, օրվանից մինչ գիշեր:» Նա պատասխանեց .« Այո:» Իսկ կինը ասաց. « Այդ դեպքում, դու խաբվել ես և վնաս ես կրել: Միթե՞ դու ապահովված ես Ալլահի

բարկությունից, այն պատճառով, որ Նրա Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բարկացած է և դու կկործանվես: Մի պահանջիր շատ բան Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն), մի սովորեցրու նրան և մի լքիր նրան: Եվ հարցրու ինձ, եթե որևէ բան քեզ անհասկանալի է:»[111]

7. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ԿԱՆԱՆՑ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՆԱՑՆԵԼԸ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բոլորից շատ էր հոգ տանում իր կանանց ցանկությունների իրականանցմանը և նրանց երջանկությանը: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, հարցրեց նրան .

«Օ, Ալլահի Մարգարե, քո կանանցից յուրաքանչյուրը ունի հատուկ անուն, բացի ինձանից:» Այդ ժամ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրան. «Կոչիր քեզ քո որդի Աբդուլայի անունով, այսինքն Աբդուլահ իբն Զուբեյրա, հիմա դու Ումմ Աբդուլա ես:» Դրանից հետո նրան կոչեցին 'Ումմ Աբդուլահ' մինչ մահ, չնայած այն փաստին, որ նա երբեք չի ծննդաբերել:»[112]

8. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԲՈՒԺՈՒՄԸ .

Մարդը առողջ վիճակում կարիք ունի հոգացության, և կարիքների ապահովման: Իսկ հիվանդության և թուլության պարագայում, նա ավելի շատ կարիք ունի դրա:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) աչքաթող չեր անում այս կողմը և հոգ էր տանում նրանց,հիվանդության ժամանակ: Նա բուժում էր

---

[111] Ալ-Բուխարի

[112] Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:

նրանց, քանի որ հիվանդությունը վտանգ է ներկայացնում: Աիշան, հավատացյալների մայրը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Երբ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ընտանիքից որևէ մեկը հիվանդանում էր, նա ընթերցում էր « Ալ- Մուավազեթ »[113] սուրաները և թեթևակի թքում էր: Իսկ երբ նա հիվանդացավ, որի պատճառով էլ մահացավ, ես ընթերցեցի նրան այդ սուրաները, թքելով և դնելով իր իսկ ձեռքը, քանի որ այն ուներ ավելի շատ բարիք, քան իմ ձեռքը:»[114]

9. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ ՀՈԳԱԼԸ.

Չնայած իր խիստ զբաղվածության և իր Ումմայի նկատմամբ մեծ պատասխանատվության, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բավարար ժամանակ էր հատկացնում իր կանանց, չմոռանալով նրանց: Ումար իբն ալ- Խատաբը, ասաց.

«Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ավարտում էր առավոտյան աղոթքը, նա շարունակում էր նստած մնալ այդ տեղում, մինչ արևը չէր ծագում: Իսկ մարդիկ, նրա շուրջ նույնպես նստում էին: Հետո նա այցելում էր իր կանանց մեկը մյուսի ետևից, ողջունում էր, և դիմում էր Ալլահին նրանց համար: Իսկ եթե նրանցից մեկի օրն էր, նա երկար էր մնում այնտեղ:»[115]

10. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ ԷՐ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ

Խորհրդակցել ընդհանուր և անձնական հարցերով Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) բնական սկզբունք էր: Նա խորհուրդ

---

[113] Սուրա «Իխլաս», «Ֆալակ» և «Նաս»
[114] Մուսլիմ
[115] Ալ-Հեյսամի

էր հարցնում իր կանանցից և օգտվում էր նրանց կարծիքից, նույնիսկ այն հարցերում, որոնք վերաբերվում էին Ումմային: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) փորձում էր ընդունել հարմար և ճիշտ որոշում վճիռ կայացնելու:

Փոխանցված է Ուրվա իբն Զուբեյրից, Մարվանա իբն Հակամից և Միսվարա իբն Մահրամից, որ նրանք հաղորդեցին նրան այն, ինչ տեղի է ունենում Հուդեյբիում:

Երբ Մարագարեն (Խ.Ա.Ո.Ն) համաձայնագիր կնքեց քուրեյշիտների հետ և համաձայնվեց վերադառնալ և չմտնել Մեքքա այդ տարի, նա ասաց իր ուղեկցորդներին . «Կանգնեք և զոհաբերություն արեք:» Բայց ոչ ոք նրանցից ոտքի չկանգնեց, մինչ նա չկրկնեց այդ երեք անգամ: Երբ ոչ ոք ոտքի չկանգնեց, նա գնաց Ումմ Սալյամի մոտ և պատմեց նրան կատարվածը: Ումմ Սալյաման ասաց. « Օ, Ալլահի Մարգարե (Խ.Ա.Ո.Ն), այդ այն է, ինչ դու ուզում ես: Դուրս գնա և ոչ ոքի հետ մի խոսիր, զոհաբերիր և սափրիր գլուխդ:» Երբ նա այդպես արեց, նրանք նույնպես զոհաբերեցին:

11. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՄՈՏ ՄՏՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԸ .

Ամենաբարձրյալ Ալլահը ասաց ճշմարտությունը, նկարագրելով Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) այսպիսի խոսքերով .

« **Ճշմարիտ, քո բնավորությունը հոյակապ է:**» (Ղուրան 68:4)

Նրա բնավորության լավ գծերից էր նաև այն, որ նա (Խ.Ա.Ո.Ն) անարդարության նշույլ անգամ չէր թողնում իր կանանց միջև, նույնիսկ հիվանդության ժամանակ: Նա (Խ.Ա.Ո.Ն) միշտ արդար էր և խնդրում էր իր կանանց, կամավոր թողնել իրենց իրավունքները: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

«Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) լինելով հիվանդ, կանչեց իր կանանց: Նրանք հավաքվեցին և նա ասաց. « Ես չեմ կարող այցելել ձեզ բոլորիդ: Բայց եթե դուք թույլ տաք, ես կլինեմ Աիշայի մոտ:» Նրանք այդպես արեցին և թույլ տվեցին նրան (Խ.Ա.Ո.Ն) այդ:»[116]

12. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո. Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԳևԵԼՈՒ ՍԵՐԸ.

Մարդկանց երջանկություն և ուրախություն պարգևելը, շարիաթի պահանջն է: Այն ավելի արժեքավոր է մերձավորների պարագայում: Աիշան, հավատացյալների մայրը, թող Ալլահը գոհանա նրանով,ասաց.

««Երբ ես տեսա Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) ուրախ տրամադրությունը, ասեցի նրան . « Օ, Ալլահի Մարգարե, դիմիր Ալլահին ինձ համար աղերսով:» Նա ասաց. «Օ, Ալլահ, ներիր Աիշային այն, ինչ կա նրա մեղքերից և այն, ինչ կլինի և այն, ինչ նա թաքցրել է և այն, ինչ ակնհայտ է:» Դրանից հետո Աիշան ծիծաղեց այնպես, որ իր գլուխը հայտնվեց իր սենյակում: Իսկ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ուրախացնու՞մ է քեզ իմ աղերսը:» Նա պատասխանեց «Ինչու՞ ինձ չպիտի ուրախեցնի աղերսը:» Նա ասաց. « Երդվում եմ Ալլահով, այդ իմ աղերսն է իմ Ումմայի համար ամեն աղոթքում:»»[117]

13. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ .

Իր կանանց հետ մեղմ կյանքի և լավ փոխհարաբերությունների հետ միասին, որոնք գալիս էին

[116] Աբու Դաուդ
[117] Ալ- Հեյսամի

Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն), նա նաև իմաստուն էր իր արարքներում: Երբ ամեն ինչ լավ էր, նա չէր հակառակվում նրանց, իսկ երբ սխալ էր երևան գալիս, նա դաստիարակում էր նրանց, հիշեցնելով Ալլահին վերադարձը, զգուշացնելով և արգելելով: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

««Մեկ անգամ ես ասացի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) .« Բավարար է քեզ այն, որ Սաֆիյան այսպիսին և այսպիսին է:» Հադիթի փոխանցողներից մեկը ասաց . « Նա նկատի ուներ, որ Սաֆիյան ցածրահասակ է:» Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. « Լսելով այս, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացականչեց .« Իրոք, դու ասացիր այնպիսի բան, որ կպղծի մի ամբողջ գետ, եթե խառնվի դրան:»»[118]

14. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴՈՒՐԺԵԼԸ.

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) իմաստության արտահայտումներից էր այն, որ նա ամեն ինչ իր տեղն էր դնում, հաշվի առնելով բոլոր հանգամանքները: Մեզ հայտնի է, ինչպես էր նա (Խ.Ա.Ո.Ն) հանդուրժում իր կանանց բարկության արտահայտումը և ինչպես էր բերում նրանց հավասարակշռության և հանգստության: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց.

««Երբ ես բարկանում էի, քրտինքը սահում էր իմ քթից: Իսկ նա ասում էր . « Օ, Ուվեյշ[119], ասա . « Օ, Ալլահ, Մուհամեդի Տեր, ներիր ինձ իմ մեղքերը, վերցրու իմ սրտի բարկությունը և հեռացրու ինձ նրանից, ով տանում է գայթակղության:»»[120]

---

[118] Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը
[119] Ուվեյշ, Աիշա անվան փաղաքշական ձևն է:
[120] Աս- Սույուտի

15. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո. Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՃԻՇՏ ՇՏԿՈՒՄԸ

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մեթոդը շտկելու և լուծելու խնդիրները կատարվում էր ըստ Շարիաթի օրենքների, որոնց կողքին պետք է կանգնել և զոհանալ: Այլ կերպ չի կարող լինել, քանի որ դրանք դիմում են մարդկանց տրամաբանորեն և գիտակցորեն, ինչը հանգեցնում է խնդրի լուծմանը: Անաս իբն Մալիքը ասաց.

««Սաֆիային հասավ, որ Հաֆսան ասել էր նրան .« Հրեայի դուստր:» Նա արտասվեց: Այդ ժամանակ նրա մոտ եկավ Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն): Նա ասաց. « Ի՞նչն է քեզ ստիպել արտասվել:» Նա պատասխանեց,« Հաֆսան ինձ ասաց, որ ես հրեայի դուստր եմ:» Այդժամ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Իրոք, դու մարգարեյի դուստր ես և իրոք, քո հորեղբայրը մարգարե է, և իրոք, դու մարգարեյի ենթակայության տակ ես: Ի՞ նչում է նա քեզ մեղադրում:» Հետո ասաց. « Վախեցիր Ալլահից, օ, Հաֆսա:»»[121]

16. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ .

Սխալը հատուկ իրավիճակ է, որը կատարվում է ամեն օր նրա հետ, ում հետ ապրում ես: Եվ արդարացումների ընդունումը մատնանշում է մաքուր բնավորություն և առաքինի սիրտ: Ո՞վ է բնավարությամբ ավելի մաքուր քան դու, օ, Ալլահի Մարգարե: Մեկ անգամ նա (Խ.Ա.Ո.Ն) սպասում էր Աիշային և նա, թող Ալլահը զոհանա նրանով, ուշանում էր: Նա ասաց. « Ի՞նչը քեզ ուշացրեց:» Նա պատասխանեց . «Օ, Ալլահի Մարգարե, ես մի մարդու Ղուրանի ընթերցում էի լսում: Եվ ես նրա ձայնից լավ ձայն

[121] Ատ- Տիրմիզի, ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:

չէի լսել:» Այդժամ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ոտքի կանգնեց, որպեսզի ավելի լավ լսի նրան: Հետո վերադարձավ և ասաց. « Սելիմն է, ազատ արձակված Աբու Հուզեյֆան: Փառք Ալլահին, Ով իմ Ումմային այնպիսի մարդ է տվել, ինչպիսին նա է:»»[122]

17. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԳևԵԼԸ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սիրում էր ասել իր կանանց այն, ինչ բերում էր նրանց երջանկություն, ուրախություն և սրտի հագստություն: Աիշան, հավատացյալների մայրը, թող Ալլահը գոհանա նրանով, հաղորդում է, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրան .

«Կցանկանայի՞ր լինել իմ կինը այս և մյուս կյանքում:» Նա պատասխանեց .« Իհարկե:» Նա ասաց. « Այդ դեպքում դու իմ կինն ես այս և մյուս կյանքում:»[123]

18. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՆՐԱ ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ .

Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) փոխհարաբերությունները իր շրջապատի հետ մեղմ էր, բարոյական բարձր աստիճանով: Այնպես, ինչպես նկարագրել էր Աստված .

« **Ճշմարիտ, քո բնավորությունը հոյակապ է**:» (Ղուրան 68:4)

Նրա կանայք ստանում էին դրա լիարժեք մասը: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց իրենց հետ Մարգարեյի փախհարաբերությունների մասին.

---

[122] Ալ- Իրակի

[123] Ալ- Ալբանին հաստատեց հադիթի իսկությունը:

«Երբ նա առանձնանում էր իր կանանց հետ, նա ամենամեղմ և առատաձեռն մարդն էր, ով շատ ժպտում և ծիծաղում էր:»[124]

19. ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ԻՐ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԵԼԸ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) թեթև և ներող էր ամեն հարցում: Նա հանդուրժում էր սխալները, նույնիսկ եթե արվում էին դիտավորյալ: Ավելին, նա ընդունում էր զղջումներ և իր ուղեկցորդներից և իր թշնամիներից: Օրինակ, երբ նա բացահայտեց Մեքքան, որից նրան վտարել էին իր կանանց և ուղեկցորդների հետ, որոնցից ոմանց սպանել էին, ասաց.

«Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ես կանեմ ձեզ հետ:» Նրանք պատասխանեցին .« Դու մեզանից հարգված եղբայր ես և մեր եղբոր հարգված որդին:» Նա ասաց նրանց . «Գնացեք, քանի որ դուք ազատ եք:»[125]

Նա հնարավորություն ուներ վրեժ լուծելու և հաշիվ տեսնելու, բայց նրա բարձր բարոյականությունը և առաքինությունը թույլ չտվեցին անել այդ: Նրա կանայք ստանում էին նրա ներման հսկայական մասը: Մեկ անգամ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մտավ իր տուն և հարցրեց .«Դուք ունե՞ք ճաշելու որևէ բան:» Նրան պատասխանեցին. «Ոչ:» Այդժամ նա ասաց. « Այդ դեպքում ես պահք եմ պահում:»[126]

20.ԱՌԱՔԻՆԻ ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) և ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՀԱՑՆԵԼ ԻՐ ԿԱՆԱՆՑ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

---

[124] Աս- Սույուտի
[125] Ալ- Բայհակի
[126] Ան- Նասայի

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ ձգտում էր գոհացնել իր կանանց այն բանում, ինչ նրանք էին ցանկանում, եթե այդ չէր հակասում շարիաթին: Նույնիսկ եթե այդ տեղի էր ունենում իր անձնական հանգստության և ցանկությունների հաշվին: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով ասաց.

«Օ, Ալլահի Մարգարե . Քո բոլոր ուղեկցորդները Հաջ են կատարել Ումրայի հետ բացի ինձանից:» Նա ասաց. « Դու տառաֆ չե՞ս արել Քաբբայի շուրջ այն օրերին երբ մենք եկել ենք:» Նա պատասխանեց .«Ոչ:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Այդ դեպքում դուրս արի քո եղբոր հետ ատ-Տանիմ[127] և մտի ումրայի վիճակ: Մենք կհանդիպենք այստեղ և այնտեղ:» Դրանից հետո, ես, դուրս եկա Աբդուռռահմենի հետ ատ-Տանիմ և սկսեցի Ումրան:

Սաֆիյա բնթ Հուեյի մոտ սկսեցին ամսականներ: Այդժամ Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) ասաց նրան . « Այդպիսին է քեզ արարել Ալլահը: Վախենում եմ դու մեզ կուշացնես: Զոհաբերության օրը արդյոք դու կատարե՞լ ես տառաֆ:» Նա պատասխանեց . «Իհարկե:» Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Այդ դեպքում ոչ մի վատ բան չկա, դու կարող ես գնալ:» Ումարայի վերադարձից հետո, ես դիմավորեցի նրան, երբ նա բարձրանում էր Մեքքայի բնակիչների մոտ, իսկ ես իջնում էի: Կամ հակառակը:»[128]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իսլամում կնոջ և տղամարդու փոխհարաբերությունը սիրո, հարգանքի, ներողամտության և արժանիքների ընդունման

---

[127] Տեղանք, որը նախկինում գտնվում էր Մեքքայից դուրս:
[128] Ալ- Բուխարի

կապն է: Սերը կնոջ նկատմամբ որպես կին, ներողամտություն նրա նկատմամբ որպես դուստր, արժանիքների և հարգանքի ընկալումը որպես մայր: Ավելին, Իսլամում կնոջ տարիքի հետ աճում է հարգանքը նրա նկատմամբ: Իսլամում գոյություն չունի խնդիր կնոջ և տղամարդու միջև, յուրաքանչյուրը արարվել է մեկը մյուսի համար, լրացնելով միմյանց: Յուրաքանչյուրը ունի իր առանձնահատուկ որակները, որը տարբերվում է մյուսից: Օրինակ, որոշ հատկանիշներ, որոնք տղամարդու մոտ համարվում են թերություն, կանանց մոտ կատարելություն է: Եվ հակառակը: Այդ իսկ պատճառով Իսլամը պարտավորեցրել է որոշակի շարիաթի և հասարակական պարտականություններ, որոնք համապատասխանում են նրա ֆիզիկական և բարոյական հատկանիշներին: Նույնպես պարտավորեցրել է տղամարդուն հետևել որոշակի պարտավորությունների:

Տղամարդուն տրված են իրավունքներ, որոնք համապատասխանում են նրա էությանը: Նույնպես կնոջն է տրված իրավունքներ, որոնք համապատասխանում են նրա էությանը: Այսպիսով, ըստ այդ հավասարակշռության, որը տվել է իսլամը, հաստատվում է համաձայնություն, հանգստություն և սեր նրանց միջև: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Ալլահը արարել է ձեր համար կանայք հենց ձեզանից, պարգևել է նրանցից երեխաներ, թոռներ և տվել է ձեզ բարիք**:» (Ղուրան 16: 72)

Երբ Իսլամը թույլատրել է տղամարդուն որևէ բան և արգելել է այդ կնոջը, կամ թույլատրել է որևէ բան կնոջը և արգելել է տղամարդուն, այն հաշվի է առել ֆիզիկական և բարոյական կառուցվածքը: Քանի որ, անարդար է տղամարդու կամ կնոջ

վրա դնել այն, ինչ ուժերից վեր է: Օրինակ մեքենան, որը աշխատում է դիզելային վառելիքով, չի կարող աշխատել բենզինով, չնայած բենզինը ավելի լավ է:Եվ հակառակը:

Այդ է մեր ռոմանտիցիզմը մեր ընտանիքների նկատմամբ, որը մենք վերցրել ենք մեր օրինակից,Մուհամեդից (Խ.Ա.Ո.Ն), ով մատնանշել է մեզ, որ յուրաքանչյուր մեղմ վերաբերմունքի համար, մանավանդ ընտանիքում, կա պարգև: Իսկ յուրաքանչյուր վատ վերաբերմունքի համար, մանավանդ ընտանիքի նկատմամբ, կա մեղք:

Սա է իսլամական ռոմանտիցիզմը, որը իրականացվել է կյանքում, այլ ոչ թե ուղղակի թուղթ ու թանաք, սիրային պատմություն կամ պատմվածք: Ի՞նչը կարող է ավելի հեռու լինել քան այդ:

Ասա ինձ հանուն քո Տիրոջ, հանդիպե՞լ ես դու այդպիսի մեղմություն հարաբերություններում, ինչպիսիք են Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հարաբերությունները իր կանանց հետ: Ճշմարիտ, նրանով (Խ.Ա.Ո.Ն) առաջնորդվելը կարող է ամուսնական հարաբերությունների շտկման գրավական լինել, որը առաջացել է ամուսնինների իրավունքների չիմացությունից: Իսկ այդ իրավունքների բացթողումները դառնում են մեղքեր, որոնք արժանանում են պատժի:

Այն ընտանեկան խնդիրները, որոնք գոյություն ունեն մուսուլմանների միջև մեր աշխարհում, արդյունք են Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) և նրա պատվիրանների չհետևելուն:

Այս է մեր իսլամական ռոմանտիցիզմը, կատարելության և մեղմության ռոմանտիցիզմը, շրջապատող ամենի նկատմամբ:

ISLAM LAND ...
GROW GOODNESS
BY YOUR HAND

EXPLORE ISLAM IN 130 LANGUAGES

ISLAMLAND

ISLAMLAND.COM

ISLAMLANDWEB